

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CONFLICT RESOLUTION CENTER OF ARMENIA

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՆՐԱԳԵՏԱԿԱՆ XX ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱԳՐՁԱՆ
ՋԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԹԵՋԵՐ

XX CONFERENCE OF
YOUNG ORIENTALISTS OF ARMENIA
THESES

ԵՐԵՎԱՆ - 1999 - YEREVAN

Տղագրվում է
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պարասխանաբու խմբագիր՝

դ.գ.թ. Արցալ Ե. Մովսիսյան

Համակարգչային շարվածք և ձևավորում՝

Անահիտ Գ. Վահանյան

1920-ԱԿՄԵ ԹԹ. ԵԳԻՊՏԱՅԻ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԳԱՂՓՔԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ
ԵԱԳԻՔ ՄՆՀՏՈՒԶԻ قصر الشوق («ԿԱՐՈՏԻ ԱՄՐՈՅ») ՎԵՂՈՒՄ

Եգիպտացի խառնուրդային արծակազիր, նորեկյան մրցանակի դափնեկիր Նագիբ Մահիթուհի հայտնի Եռագրությունը ամփոփում է մեծամավալ վեպի ժանրը արարական նոր գրականության մեջ: Եռագրության ընդգրկած ժամանակաշրջանը բավականին մեծ է՝ 1917-1944թթ., և բնական է, որ վերոհիշյալ 3 տեսիլագրություններում այս կամ այն ուժգնությամբ արտացոլվել են բոլոր այն խնդիրները, որոնք հուզել են եգիպտական հասարակությանը վերոհիշյալ ժամանակաշրջանում:

Այս ուսումնասիրության մեջ առանձնացնելով Եռագրության *قصر الشوق* («Կարոտի սմբոց») վեպը՝ կարևորել ենք այն հանգամանքը, որ այստեղ՝ տեղի ունեցող իրադարձությունները ուղեկցվում են դրանց տրված եգիպտացի մտավորականի գնահատականով, ինչի շնորհիվ ավելի հստակորեն է գծագրվում այն հասարակական-քաղաքական, մշակութային, սոցիալ-հոգեբանական դաշտը, որում ձևավորվել է I և II համաշխարհային պատերազմների միջև ընկած և փաստորեն Եգիպտոսի իրական անկախությանը նախարդած ժամանակաշրջանի եգիպտական հասարակությունը:

Հեղինակի կարծիքը շատ հաճախ ընթերցողին է ներկայացվում ոչ քե անմիջականորեն, այլ խորհրդանիշների միջոցով, որը կարող է պայմանավորված լինել ինչպես այս բնագավառում արարական գրականության կոռուսկված հարուստ փորձով, այնպես էլ քաղաքական հեռավոր հետապնդումից խուսափելու հեղինակի մտայնությանը: Ուստի ուսումնասիրության մեթոդը եղել է վեպի բավանդակությունը խորհրդանիշների համակարգի վերածելու և դրա միջոցով հեղինակի ասելիքը մանրամասնելու ու մեկնարկները՝ գրական տեքստը զուգորդելով պատմական մեջբերումներով:

1. Կարևորվում է վեպի ինքնակենսագրական բնույթը: Վեպի գաղափարախտության հիմնական ժանրությունն է իր վրա կրող հեքայը՝ Քենալ Ահմադ Արդ էլ Գավալը կենսագրական բազմաթիվ և անվիճելի նմանություններ ունի հեղինակի հետ: Եգիպտոսի համար այսբան կարևոր ժամանակաշրջանը վեպում 18-ամյա պատանու գնահատականներով արտացոլելու չափազանց խիզախ մտադրությունը կարող է մեկնարկվել վերոհիշյալ հեքայի ասելիքի բազմաթիվ համաստիություններով:

2. Քենալ Ահմադ Արդ էլ Գավալի մասնագիտական ընտրության խնդրի բնարկումներում մտավորականները ներկայացվում են որպես մարդկանց մի խումբ, որոնց գործունեությունը հասարակական պահանջարկ չունի և դատապարտված է Եգիպտոսում:

3. Հուսեյնի դամբարանը ներկայանում է որպես արար-մահմեդական ավանդույթի խորհրդանիշ և շարունակական զարգացում է սպրում վեպում՝ արտացոլելով եգիպտական հասարակության կողմից վերոհիշյալ ավանդույթի ընկալման և գնահատման էվոլյուցիան:

4. Եվրոպականացված Եգիպտոսի խորհրդանիշ է ներկայացնում Ախլա Շադդալը, որի կերպարի միջոցով Ն.Մահիթուհը պատկերել է արևմտյան քաղաքակրթության՝ Եգիպտոս ներթափանցած ստրիկտումները, տալիս է դրանց՝ արարական հասարակություն ներթափանցման և արարական հասարակության համար դրանց ընկալելիության, ինչպես նաև օգտակարության կամ վնասակարության աստիճանը:

5. Ն.Մահիթուհ-Քենալ ինքնակենսագրական զուգահեռներից մեկը՝ զրոյ դառնալու ցանկությունը, ներկայացվում է որպես եգիպտացի մտավորականի

գաղափարական երկփեղկվածությունը լուծելու միջոց, որպես մի նոր, հնարավոր վիպական իրականություն ստեղծելու միջոցով արար-մաննեդական ավանդույթը և արևմտյան քաղաքակրթության ձեռքբերումները համադրելու ցանկություն։ մի բան, որ անհնարին է ներկայացնում իրական կյանքում:

6. Վեպան հսկայական նշանակություն է տրվում Եգիպտոսի կրթության և արդարադատության նախկին նախարար Սասո Չաղուլին, որը ներկայանում է որպես հոգևոր Եգիպտոսի խորհրդանիշ, որը երկրի անկախությունը համարում է բոլոր խնդիրների լուծման նախապայմանը, եգիպտացի սալագա քաղաքական գործչի լավագույն կերպար, նոր ձևավորվող մասժոքության բարոյական արժեքների կրող:

7. Նկարագրելով Քեմալի բնուսնիրում ախրող բունակալությունը, որն անգլիտության հետևանք է, անդրադարձ է արվում Օսմանյան Թուրքիայի պարատաղրած և Մեծ Բրիտանիայի կողմից շահագործված տնտեսական ու մշակութային հետամնացությանը, որը ներկայացվում է որպես Եգիպտոսի ներկա դժվարությունների պատճառ և սպառնալիք ապագայի համար: Անդրադարձ է արվում նաև կրոնական ավանդույթին, որը ներկայացվում է որպես բունակալության հետևանք և երե հասարակական առումով դիտվում է կրոնի և հասարակական ավանդույթի տարանջատման, ավանդույթի ռացիոնալիզացիայի և ժամանակին հարմարեցնելու խնդիրը, ապա քաղաքական առումով առաջ է քաշվում կրոնի՝ քաղաքական կողմնորոշումներ չպարտադրելու և կրոնական գործունի ազդեցությունից զերծ պահելով՝ պատմության վերանայման խնդիրը:

ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒՐԻՍ (ԵԳՏ)

«ՄԲԲԻ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱՎԱՆԳԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՍԳԵՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. «Մբբի» հասկացությունը հայ մշակույթում բողոքովին միանշանակ չի կարելի մեկնարանել: Այդ տերմինը իր մեջ ներառում է ծագումով տարբեր երևույթներ, որոնք նաև տարբեր տեղ են զբաղեցնում ավանդական մշակույթի և մտածելակերպի մեջ: «Մուրք» անվանումով կոչում են եկեղեցու կողմից սրբացված կամ հասարակության կողմից ճանաչված նահատակներին, որոնք մեծ մասամբ իրական դեմքեր էին (նշենք, որ սույն գեկույցում կանգ չենք առել այն սրբերի վրա, որոնք պատկանում են ողջ քրիստոնեական կամ համահայկական պանթեոնին և սերտ առնչություն ունեն հեթանոսական աստվածությունների հետ), ինչպես նաև ոչ-անճամպոլոված ոգիներին, որոնք որևէ (դրական կամ բացասական) ազդեցություն են ներգործում մարդկանց կյանքի վրա՝ ինքնուրույն կամ միջնորդների օգնությամբ:

2. Առաջին և երկրորդ երևույթները բնութագրելիս՝ չենք կարող չնկատել, որ կան կետեր, որտեղ երկուսն էլ խաչվում են: Հայկական վկայագրությունները հրաշագործ-սրբերի և բուժողների շատ քիչ օրինակներ են բերում, սակայն միաժամանակ կարելի է տեսնել, որ նահատակների զգալի մասը այդպիսի հատկություններ են ձեռք բերում տանջամահ լինելուց հետո, այսինքն՝ նրանց գերեզմանը դառնում է հիվանդություններ բուժելու վայր, հաճախ նույնիսկ «մասնագիտացված» այն բուժում է կոնկրետ հիվանդություններ: Նույն գործառույթն ունեն նաև բազմաթիվ սրբատեղեր, որոնք պատկանում են անամուն սուրբ-ոգիներին: Այդ սրբատեղերը առաջանում են մինչև օր՝ մարդկանց երազներում կամ տեսիլներում սրբերի արասնայալված ցանկության կամ հրամանի հետևանքով: Եվ սրբերի գերեզմաններն և սրբատեղերը հավասարապես մտնում են այն վայրերի ցանկի մեջ, որոնց բուժիչ հատկություններ են վերագրում: Այդ

ցանկից օգտվում են բուժման և գուշակության բնագավառի ծխական մասնագետներ՝ այնտեղ հիվանդներին ուղարկելով:

3. Ուշադրություն դարձնելով վերը նշված ծխական մասնագետների վրա՝ նկատում ենք, որ նախատակի սրբացման պատճառը (նրա տառապանքների ենթարկվելը և տանջամահ լինելը) նրանց կայացման մեջ գլխավոր պարագաներից է դառնում: Առաջիններից տանջանքների են ենթարկում այլակրոնները (մահմեդականները), իսկ երկրորդներից՝ «սրբերը», որոնց մի մասը նույն ձևով նախատակվել է այլակրոնների կողմից: Հատկանշական է, որ, ըստ ատկա նյութերի, վերջիններս երազներում և տեսիլքներում հաճախակի հանդես են գալիս հենց այլազգիների և այլակրոնների՝ բուրբերի ու քրդերի տեսքով: Այստեղ գարնանալիլ համանմանություն է բացահայտվում՝ սուրբ նախատակների և բուժման/գոյշակության մասնագետների միջև, որոնց ունակությունները ձեռք են բերվում տառապանքների կամ մահվան միջոցով, առաջին դեպքում իրական, երկրորդ դեպքում՝ ծխական:

4. Այդ համանմանության ակունքները ուսումնասիրելիս՝ հանգում ենք նրան, որ ամեն մի վերը նշված երևույթի շրջանակներում կարևորվում է միջնորդի գաղափարը: Ծխական մասնագետը (ինչպես նաև այլ մշակույթներին հատուկ շանսեր) միջնորդ են մարդկանց և ռզինների աշխարհի միջև, իր հերթին՝ օգնական ռզինները միջնորդ են հանդիսանում այդ մասնագետի և հանդերձյալ աշխարհի միջև: Զբիտոնեական մտածելակերպի համաձայն՝ սուրբը և միջնորդ է մարդ-սատված հարսրեքակցության մեջ: Ավանդական ժողովրդական մտածելակերպը նմանեցնում և ունիֆիկացնում է այդ պատկերացումները՝ միավորելով դրանք «սրբի» անվան տակ:

5. Նկարագրված մոդելը կարող է ենթադրաբար դիտվել որպես կրոնական սինկրետիզմի ձևավորման մեխանիզմներից մեկը, որը, կրոնական համակարգերի միջև եղած գաղափարական և ձևական հակասությունները հսրբելով, նպաստում է դրանց միաձուլմանն ու միևնույն ժամանակ ավանդական մտածելակերպի միասնական առասպելաբանական կառուցվածքի պահպանմանը:

ԱՐՇԱԿՅԱՆ ՄՆԵՐ

1979 թ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀՆՊԱՓՈՒՍՈՒԹՅԱՆ ԳՐԳԱՊԱՏԱՋԱՆՆԵՐԻ ԸՈՒՐԶ

1. Իրանական հեղափոխության պատճառները կարող են բնորոշել մեկ առանձին մարդու ընդհատացումը: Այդ հեղափոխությունը չէր վերաբերում բոլորին, այլ ամենին՝ առանձին-առանձին: Այն, ինչ տեղի ունեցավ 1979 թ., այդպիսով էր մոտավորապես խնդրի տեսարան ապրողի կատաղության: Ավելին, հեղափոխությունը, որը պատճառաբանվում է արժանապատվության անհրաժեշտությամբ, իրանցիները ծավալեցին «ոչ արժանապատվություն, ոչ նվաստացում» սցենարով: Այսինքն, նրանք հրաժարվեցին արժանապատվությունից, նրպեսզի ստիպված չլինեն դրա համար պայքարել: Շահի իշխանությունը նրանցից չէր քաղցնում արժանապատվ լինելու հնարավորությունը, սակայն ոչնչով նրանց չէր օգնում լինել այդպիսին: Արդյունքում, իրանցին նվաստացում էր վատառկում: Հեղափոխությունը նախ և առաջ արժանապատվության բացասումն էր:

2. Իրանական հեղափոխության պատճառները դեռ չեն սպառվել, այսինքն՝ հեղափոխությունն ինչ-որ իմաստով դեռ շարունակվում է: Իսլամն, իբրև կրոն, այդ բույլ է տակիս:

3. Իրանում Շահի օրոք չձևավորվեց «մրցակիցների ինտիլլուտաբը»: Խոսքն այն մասին է, որ մինչև 1979 թ. մարդիկ ճանաչում էին իրենց բշնամիներին, հատկապես

քշնամիներին, նրանք գիտեին, քե ում հետ են «զուխ դնելու», որպեսզի վաստակեն երբորդին արժանի լինելու պատճառները: Շահի իշխանությունը հենց այդ «արժանավորության ինստիտուտն» էր մարմնավորում:

4. Արևելք-Արևմուտք հակադրությունը: Արևմուտքի պայմանական մարմնավորումը Շահի կողմից: Միքո առիթով նվաստացածների և ազատության պատճառով նվաստացածների, այդ իմաստով կապիտալիստական և սոցիալիստական արժեքների իմաստավորումը:

5. Պարսկական ինքնապարփակվածությունը, որը մենք գտնում ենք X-XV դդ. պարսկական պոեզիայի ռուբայաթներում, բախվեց արևմտյան սանձարձակությանը, որտեղ գաղտնիքներ չկան, կան սոսկ գոհեր:

6. Գաղտնիքը որպես հեղափոխության նվաճում. շարքային իրանցին, որն ուղն ու ծուծով գոյատևել է Արևմուտքի ազատական ցինիզմի պայմաններում՝ առանց այդ ցինիզմին հասանելի լինելու, ի վերջո որոշում է վերջ տալ այդ ամենին: Նա ինսուրբյունը կամ խորհրդավորությունը փախարհում է գաղտնիքով:

7. Իրանական հեղափոխությունը համախմբեց բոլորին, կարելի է ասել, արևմտյան փորձությունները փոխարինվեցին արևելյան փորձություններով: Հեղափոխությունը դադարեց պատճառարանել իրեն, քեպես պատճառները պահպանվեցին:

ՔԱՆՁԱՆ ԿԱՐԳԱՆ (ԵՊՏ)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈԿԸ ՈՐԳԵՍ ԱՆԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ՄՈԳԵՌՆԵԶԱՅՄԱՆ ՀՆՏԵՎԱՆՔ

Հասարակական կառուցակարգի արդիականացման անհրաժեշտությունն այսօր ակնառու է բոլորի համար: Արդիականացումը հանդիսանում է յուրահատուկ պատմական մարտահրավեր, որին վաղ քե ուշ, բայց անպայման տեսանելի հետևնկարում, հարկադրված կլինի բախվել յուրաքանչյուր հասարակություն: Նրա կառուցվածքի և իրականացման արդյունավետության վրա ազդում են մի շարք գործոն-ներ, որոնց թվում արժե նշել.

ա) մտքիլիզացման և ինստիտուցիոնալ շինարարության համար անհրաժեշտ և հասանելի ռեսուրսները,

բ) արդիականության ուժերի, ազդեցության միջոցները և ձևերը,

գ) սոցիալ-մշակութային միջավայրը,

դ) հասարակության և էլիտայի կազմակերպական և մշակութային առանձնահատկությունները:

Այս գործոններից որևէ մեկի անտեսումը կամ քննազնայաատումը հղի է ծանր հետևանքներով: Վերոհիշյալի վառ ապացույցն է իրանական իրականությունը, որտեղ 1960-70-ական թթ. իրականացվում էր արդիականացման գծային մոդելը: Արդյունքում իրանական հասարակությունը հայտնվեց շատ խոր ճգնաժամի մեջ, որը կարելի է քննորշել որպես հին և նոր պայքար: Վերոհիշյալը պայմանավորված էր նրանով, որ տարաբնույթ հասարակական վերափոխումների արդյունքում սոցիալական համագործակցության հին մեխանիզմը քայքայվել էր, մարդկանց կենսավորձը արժեզրկվել և դարձել անօգուտ: Իսկ այդ նորմատիվ սպակողմնորոշումը, առկա իդեալների և բարոյական արժեքների համակարգի փլուզումը դարձել էր ներքին, հոգեկան անհանգստության պատճառ: Վերոհիշյալը շատ լավ բացատրում է այն, որ մեծ մասամբ արդիականացման արդյունավետ մեխանիզմների կիրառման արդյունքում հասարա-

կոթյունը հայտնվում է մշակութային շոկի մեջ, որի հետևանքով հասարակությունը կարող է կորցնել իր բարոյական դիմագիծը:

ՔԱՂՉԱՍՏՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱԵ

**ԹՈՒՐԻԱՆՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՍՅԵՄԱՆԻՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՅՈՒ ԸՆԴՈՒՄ**

1920-1930-ական թթ. շրջափայտում հաստատված քաղաքական համակարգը հասկանալու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանում երկրում իշխող Հանրապետական-Ժողովրդական կուսակցության մասին:

ՀԺԿ-ն ստեղծվեց 1923թ. ապրիլին՝ հանդիսանալով 1919-1922թթ. ազգային շարժման ժառանգորդը: ՀԺԿ-ի ձևավորումը տեղի ունեցավ Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների կառուցվածքների հիմքի վրա, երբ նրանց առաքելությունը՝ պատերազմի ժամանակաշրջանում միավորելու ժողովրդին և երկրի քաղաքական ու ռազմական ընտրանին, կատարված էր, իսկ իշխանությունն իր ձեռքում պահելու համար Քենմալին արդեն չէին բավարարում նրա անձնական հեղինակության ու ժողովրդականության և բանակի գործունեության: Անհրաժեշտություն առաջացավ ձևավորել կազմակերպված և կարգապահ քաղաքական ուժ, որն ամրապնդելու էր Քենմալի և նրա կողմնակիցների դիրքերը:

1923թ. մեջլիսի ընտրությունները անցան ՀԺԿ-ի հսկողության տակ և բացարձակ հաղթանակ բերեցին նրան: Բայց արդեն 1924թ. կուսակցությունում պառակտում տեղի ունեցավ, երբ մի խումբ հեղինակավոր քաղաքական և ռազմական գործիչներ (Ռաուֆ, Էլազըմ Կարաբեքիր, Ալի Ֆառադ, Ռեֆեք և այլն), դուրս եկան ՀԺԿ-ից և ստեղծեցին Առաջադիմական-Հանրապետական կուսակցությունը, որը, ձևավորվելով նույն հենքի վրա, օրեցօր դառնում էր ավելի փասնագավոր իշխող վարչակարգի համար: Բայց քրդական ապստամբությունը (1925թ.) և «Իզմիթի դավադրությունը» (1926թ.) ազատ արձակեցին Մուստաֆա Քենմալի ձեռքերը. ընդդիմությունը վերացվեց, մտցվեցին «կարգուկանոնի պահպանման արտակարգ օրենքներ», որոնց կիրառումը ուղեկցվում էր քաղաքական հետապնդումներով ու տեղորով, և երկրում հաստատվեց միակուսակցական քաղաքական համակարգ: 1923-1930թթ. ընթացքում ՀԺԿ-ի ղեկավարները կենտրոնացրել էին իրենց ջանքերը հանրապետականության աշխարհիկ և ժողովրդական քաղաքականության գաղափարները ժողովրդի մեջ տարածելու գործում՝ համոզված լինելով, որ կուսակցության գիծը անվերապահորեն ընդունվում է բնակչության կողմից և, որ ինքը՝ ՀԺԿ-ն հանդիսանում է ամբողջ քուրդ ազգի կամքի մարմնավորումը:

Մակայն 1930թ. Լիբերալ-Հանրապետական կուսակցության ստեղծման անհաջող փորձը վկայեց, որ այդ համոզմունքն այնքան էլ ճիշտ չէր: Ժողովուրդը մեծ ոգևորությամբ էր առջումում երկրորդ կուսակցության ստեղծումը, և ՀԺԿ-ն ստիպված եղավ կրկին վերադառնալ միակուսակցական համակարգին՝ այս անգամ ավելի մեղմ ձևով: 1931թ. ՀԺԿ-ի երրորդ համագումարում հայտարարվեց, որ երկրում կարգուկանոն և կայունություն է հաստատված և հանրապետության ու կուսակցության համար սկսվում է նոր փուլ:

ՀԺԿ-ի ձևավորման տարիներին ստեղծվեց կուսակցական կուր կառուցվածք, որի վերևում կանգնած էր ՀԺԿ-ի գլխավոր մասագահը, որը միաժամանակ ղեկավարում էր կուսակցության ընդհանուր համագումարը, կենտրոնական վարչությունը,

գլխավոր վարչությունը, գլխավոր նախագահին կից խորհուրդը և մեջլիսի կուսակցական խմբավորումը: Բացի այդ, ՀԺԿ-ի գլխավոր նախագահը նշանակում էր կուսակցության տեղական կազմակերպությունների ղեկավարներին՝ տեսուչներին: Այս ապարատի միջոցով էլ ՀԺԿ-ն հաստատեց իր լիակատար իշխանությունը երկրում՝ դատնալով Թուրքիայի ամբողջ հասարակական քաղաքական գործունեության ողնաշարը: Քննարկական վերնախավը հստակ պատկերացում ուներ իր վարչակարգի համար միակուսակցական համակարգի նշանակության մասին: Այդ պատճառով էլ այդ համակարգը վերացնելու և ազատական ժողովրդավարություն հաստատելու բոլոր կոչերին ՀԺԿ-ն վերաբերվում էր որպես պետական անվտանգության և երկրում կայունության խախտման փորձերի: Քաղաքական վարչակարգը չէր կարող ամուր լինել, եթե չունենար իր հիմքում միակուսակցական համակարգ:

Այս երևույթի բնական շարունակությունը դարձավ պետության և կուսակցության սերտաճումը: Հանրապետությունում քիչ քե շատ բոլոր կարևոր պաշտոնները զբաղեցնում էին ՀԺԿ համապատասխան մակարդակի ղեկավարները: Կուսակցության մենատիրական իշխանությունը երկրում հնարավոր չէր լինի հաստատել, եթե ինքը՝ կուսակցությունը չնույնացվեր պետական իշխանության հետ: Այդ սերտաճման արդյունքում ՀԺԿ-ն քաղաքական կազմակերպությունից վերածվեց պետական ապարատի և ուժային կառույցների վրա հենվող հաստատության, որը իշխում էր 27 առավա ընթացքում:

Այսպիսով, ՀԺԿ-ի ձևավորման գործընթացն անցավ ամբողջատիրական տիպի կուսակցություններին բնորոշ առանձնահատկություններով՝ 1) կուսակցական մերենայի ստեղծում, 2) պետության և կուսակցության սերտաճում, 3) մեկ առաջնորդի ձեռքբերում իշխանության կենտրոնացում, 4) ամբողջ ժողովրդի և նրա տարբեր խավերի և խմբերի շահերի համատեղում մեկ կուսակցության շրջանակներում, 5) քաղաքական հակառակորդների նկատմամբ հետապնդումների և ճնշման քաղաքականության կիրառում:

ՔՐՈՒՆՅԱՆ ԱՐՄՆԵՆ (ՀԱԲ)

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԺԱԹԵ ԱՆՈՒՆԵՐԸ (Ք.Ա. II ՀԱԶ. 1-ԻՆ ԿԵՍ)

Հյուսիստիպիական Մարի քաղաքից հայտնաբերված և Ք.Ա. XIX-XVIII դդ. վերաբերող սեպագիր տեքստերում (ARM, XXV, 499-536) հիշվում են Նիխրիա քաղաքից (Աղձնիք) արտահանվող տասնյակ արծաթե անոթներ: Մարիի առևտրական համակարգում շրջանառության մեջ էին գտնվում այդպիսի մի քանի տեսակի անոթներ, որոնց քվում՝ *kaptaritam*-կրետական, *yamhaditum*-հայեայան, *qutu*-կուտիական, *tukrašum*-տուկրիշյան և *nihriyatam*-նիխրիական: Վերջինս քավակաճիմի հաճախ է շեշտվում: Նիխրիայի և Կարանայի կապակցությամբ հիշատակվում են նաև *bablatum* տիպի արծաթե ամաններ, իսկ Նիխրիայի և Կուրդայի առնչությամբ՝ արծաթե պոյակներ, որոնցով հատկապես հարուստ էր Տուկրիշ երկիրը (այս երկրի բնակիչները հայտնի էին որպես մետաղե անոթների հմուտ վարպետներ):

Ի հայտ են գալիս նաև այդ անոթները բնորոշող քառեր (օր. *Isdam*-հատակ, *tulu*-կորնքարդ մաս, *gištu*-մատուկ, *šaptu*-շուրք, *sugutu*-կանք/եր, «փորագրագարք», «խաչագարդ» են), որ թույլ են տալիս մտածվոր պատկերացում կազմելու վերոհիշյալների ձևերի մասին:

Նիխրիայի արժաքն անոթները արժեին 9-19 սիկղ, Կուրդայի անոթներից մեկը՝ 1 սիկղ: Նման իրերը սովորաբար օգտագործվում էին ընծայափոխանակության համար: Ըստ կապարովկիական տեքստերի՝ արժաքն անոթների առևտրում ակտիվ մասնակցում էին ամորեացի առևտրականները: Հայտնի են Նիխրիայից 2 բրոնզե և 8 արժաքն ամաններ առաքողների (Բահդի Լիմ, Լիպիտ Էա) և Մարիում դրանք ստացողների (Ահու Վագար, Բեշումու) անունները: Սակայն դրանք պատրաստվում էին տեղական արհեստավորների կողմից՝ ինչպես կարելի է դատել խեթական արձանագրություններից: Ուզարիթյան տեքստերից հայտնի է նաև, որ արժաքն անոթները հարկատվության միջոց էին կենտրոնական իշխանությանը՝ ենթակա շրջաններից և բացի այդ ունեին ծխական գործառույթ:

Այսպիսով, արժաքն անոթներ առաքող տեղանունների բվում, բացի Նիխրիայից հիշատակվում են նաև Կարանան (Շոփրում), Կուրդան (Կորդուրում), Գուտիումը, Տուկրիշը (Վան-Ուրմիա շրջան) և Ուրշում (Հայկական Տավրոսից հարավ): Երկրներ, որոնց տարածքը հիմնականում համապատասխանում է Հայկ. Տավրոսի համակարգին, որը, Կիլիկյան Տավրոսի հետ մեկտեղ, համաժամանակյա աղբյուրներում հայտնի էր «Արժաքն լեռներ» անվամբ, որտեղ և գտնվում էին տարածաշրջանի գլխավոր արձաքահանքերը և որը առանցքային դեր էր խաղում միջազգային առևտրում (Ք.ա. III-II հազ. սահմանին արժաքն անոթների առևտրական ճանապարհը Հայկական լեռնաշխարհից գնում էր արևմուտքում՝ դեպի Անատոլիա-Էգեիդա-արևմտյան Եփրատյա, հարավում՝ Լևանտ-Եգիպտոս-Միջագետք, հյուսիսում՝ Կովկաս, արևմուտքում՝ Աֆղանստան ուղղություններով):

Արժաքն անոթների պատրաստման աշխարհագրորեն սահմանափակ վերոնիշյալ տարածույթի առկայությունը առիպում է մտածելու անդրկովկասյան միջինբրոնզեդարյան արժաքն գավաթների (Թոեդր, Վանաձոր, Քարաշամբ) հնարավոր առնչության մասին հիշյալ գոտու հետ: Այս վարկածը կարելի է հիմնավորել 4 փաստերով.

ա) Անդրկովկասյան անոթները ակնհայտ կապեր են ցույց տալիս անատոլիամիջագետքյան, լևանտյան (հմմտ. *yambaditum* ոճը) և Էգեյան (հմմտ. *kaptaritam* ոճը) ավանդույթներին. դրանք կարող էին իրականում հիմնականում հարավային Հայաստանի վրայով.

բ) Թոեդրի, Քարաշամբի, Վանաձորի (ինչպես նաև Մայկոսի) անոթների որոշ ախպեր հայտնի են հարավային Հայաստանի հնագիտական նյութերում (Շոփրում՝ հմմտ. Քորուշուրեփե, Հան Իբրահիմ Շահ և այլ բնակավայրերը):

գ) Մարիի տեքստերի նկարագրական տվյալները մասամբ համընկնում են հնագիտական նյութերին (հմմտ. օր. նստուկի առկայությունը Քարաշամբի և Թոեդրի գավաթներում, Վանաձորի անոթների խաչանման զարդը, կանթերը ևն):

դ) Անդրկովկասյան և մայկոսյան անոթների վրա պատկերված է Տիգրիսի և Եփրատի ակունքների շրջանը, որտեղ հենում ենթադրվում էր անդրաշխարհը: Անդրաշխարհ - արժաքն գավաթ գաղափարի գուգակցումը (հմմտ. Քարաշամբի օրինակը) բավականին տարածված էր անատոլիա - միջագետքյան միջավայրում. գետի ակունքների և անդրաշխարհի խեթական Իշխաշխարհիա աստվածուհուն ընծայվում էին արժաքն անոթներ, նա պատկերվում էր արժաքն գավաթը ձեռքին, իսկ կրճրին՝ արժաքն մասիկածև կախիկներ էր կրում՝ ինչպիսիք հայտնի են համաժամանակյա Անդրկովկասյան հուշարձաններից (Վերին Նավեր, Դիմսց ևն.) և Շոփրից (Թեփեջիք); անոթի հետ էր կապվում անդրաշխարհի խորիմական դիցուհի Լեվանին; անդրաշխարհում խեթական արքայի աղբյուրուներն էին անոթը և ջրաբրիի արժաքն մոդելը; անդրաշխարհի միջագետքյան աստվածություն է՝ ան պատկերվում էր ձեռքին սկահակով,

որտեղից բխում էին Տիգրիսն ու Եփրատը: Բողազքոյի մի տեքստում նշվում է արծաթե անոթների խորհրդավոր կորստիյան մասին Քաշիարի լեռներում՝ Աղճիքից հարավ (որի շրջանում ասորեստանյան աղբյուրները հիշատակում են մետաղե անոթների արտադրության կարևոր կենտրոն Կադմուխին), իսկ Տուկրիշը Միջագետքում ընկալվում էր որպես «անդրաշխարհ», փաստեր, որոնք ավելի ընթերցելի են դարձնում անդրկովկասյան անոթների պատկերագրությունը:

Աստվածաշունչը ևս տեղեկություններ է հաղորդում քննարկվող խնդրի վերաբերյալ: Այստեղ վերինեփրատյան ցեղերը նախ ներկայացվում են որպես մետաղագործության ուսուցիչներ (Ծննդ., Գ:22): Ապա՝ արծաթե անոթների հիշատակումը Համատ-Սուրա (Ծոփք) համատեքստում (Բ.Թագ., Ը:9-12), և տյուրոսյան առևտրում վերին եփրատյան շրջանների մետաղե անոթների առևտրի մենաշնորհի հանգամանքը (Եզեկ., ԻԷ:13) վկայում են այն մասին, որ Տիգրիսի և Եփրատի ակունքների տարածքը եղել է մետաղե, մասնավորապես, արծաթե անոթների առևտրի և արտադրության կարևոր կենտրոն և, բնականաբար, կարող էր ազդակներ փոխանցել ոչ միայն Կովկաս, այլև հեռավոր շրջաններ կամ, որպես «կոնտակտային գոտի», միջուրդ հանդիսանալ (ինչով էլ կարելի է բացատրել օր. Վանաձորի և Թոդի (Եգիպտոս), Վանաձորի, Ալաջա հույուրքի և Վաֆիոյի կամ Քարաշամբի և Տրոյայի արծաթե անոթների մնամությունները): Աստվածաշունչում, քերես, արտահայտված է միջոցեղիմալ առևտրի այն համակարգը, որը վկայված է գրավոր և հնագիտական աղբյուրներում առնվազն Զ.ա. II հազ. սկզբից:

ԳՄՄՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ (ԵՂՏ)

1978-1979 թթ. ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՆԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

1978-1979թթ. իրանական հեղափոխությունը փոխեց քաղաքական իրադրությունը ոչ միայն Իրանում, այլև ողջ Մերձավոր և Միջին Արևելքում:

Տարածաշրջանում «կայունության երաշխավոր» համարվող Իրանում ծավալված իրադարձությունները սպառնում էին այն վերածել սպալայունացնող գործոնի, հանգամանք, որը մեծ վտանգ էր ներկայացնում տարածաշրջանի բոլոր պետությունների համար:

Իրանական իրադարձությունները հատկապես անհանգստացրել էին տարածաշրջանի արաբական արևմտամետ վարչակարգերին և, առաջին հերթին, Սաուդյան Արաբիայի քաղաքական ընտանիքին: Ներքին սցյուալ-քաղաքական կառուցվածքների նույնատիպությունը, ինչպես նաև արաբքին քաղաքական կողմնորոշումների ընդհանրությունը ստեղծված իրադրության պայմաններում միանգամայն հավանական էին դարձնում իրանական նախադեպի կրկնությունը նաև այդ երկրում: Պատասխան չէ, որ իրանական հեղափոխությունից հետո հնարավոր հետևանքներից խուսափելու նպատակով տարածաշրջանի մի շարք երկրների, այդ թվում և Սաուդյան Արաբիայի քաղաքական կյանքում սկսեցին նշարվել ազատականացման միտումներ:

Գրեթե բոլոր հիմնական գործոնները, որոնք Իրանում առաջ էին բերել հեղափոխական շարժում, առկա էին նաև Եգիպտոսում: Սցյուալական սուր հակասությունները, Միացյալ Նահանգների հետ ջերմ հարաբերությունները, համագործակցությունը Իսրայելի հետ, որը գրգռում էր երկրի մանենդական ազգաբնակչությանը և վիրավորում

նրա կրոնական զգացումները, այն նախադրյալներն էին, որոնք ցանկացած պահի կարող էին պոռկելու առաջացնել:

Այս երկրների ղեկավարներին հասկապես լուրջ մտախոհության առիթ էր տալիս այն հանգամանքը, որ չնայած գործադրած ջանքերին, Միացյալ Նահանգներին այդպես էլ չէր հաջողվել կասեցնել Իրանում հեղափոխական պրոցեսի ծավալումը, ինչը և նրանց մեջ կասկածներ էր առաջացրել ԱՄՆ-ի հզորության և ամենակարողության նկատմամբ: Խաբարվել էր նաև ԱՄՆ-ի՝ որպես վստահելի և հավատարիմ գործընկերոջ կերպարը այն բանից հետո, երբ նա, ի վերջո, հրաժարվեց իր հիմնական դաշնակից շահին մինչև վերջ աջակցելուց: Իրանի ղեկավարը ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը առաջին իսկ հարմար առիթով կարող է լքել իր բարեկամներին:

Իրանի Մուհամմեդ Ռեզա Փեհլևի շահի ամերիկամետ վարչակարգի տասյալումը սպառնում էր թուլացնել ԱՄՆ-ի (և, ընդհանրապես, Արևմտոսթի) ռազմավարական դիրքերը տարածաշրջանում:

Այս պարագայում ԱՄՆ-ի համար առաջնաերթ էր դառնում իր մերձավորարևելյան քաղաքականության վերանայումը և, չհրաժարվելով Իրանում իր դիրքերն ամեն կերպ պահպանելու փորձերից, միաժամանակ նոր հենարաններ որոնել՝ տարածաշրջանում իր տնտեսական, ռազմավարական և քաղաքական շահերն ապահովելու համար: Այդ նպատակով դեռևս 1979թ. սկզբներին ԱՄՆ-ի ղեկավար շրջանները ձեռնամուխ են եղել արտակարգ ծրագրերի մշակման, որոնց իրականացման հետ մեծ հույսեր էին կապում:

Միացյալ նահանգների կողմից Պարսից ծոցում ամերիկյան ժանդարմի՝ Իրանի նախկին ղերն ստանձնելու ամենախարմար քեկնածու էր դիտվում նավթային հարուստ պաշարներ և վստահելիորեն ամերիկամետ կողմնորոշում ունեցող Մատույան Արաբիան: ԱՄՆ-ին այդ տեսակետից հետաքրքրում էր նաև Եգիպտոսը՝ իր ռազմական հնարավորություններով, մարդկային ռեսուրսներով և ԱՄՆ-ի հետ փոխադարձաբարությունների սերտությանը, որը ԱՄՆ-ի ամենզմամբ կարող էր կարևոր դեր խաղալ նրա մերձավորարևելյան և աֆրիկյան քաղաքականության իրականացման գործում: Պատահական չէ, որ ԱՄՆ-ը տարածաշրջանում կայունության նոր գործոնի դերում առաջին հերթին տեսնում էր հենց Մատույան Արաբիային և Եգիպտոսին, և ոչ իր մերձավոր դաշնակիցներից մեկին՝ Իսրայելին, քանի որ նրա միջամտությունը ապրածաշրջանային գործերին միանշանակ կերպով կոյտվեր և կզնախառվեր որպես ասարածքներ նվաճելու փորձ: Այլ բան էր Իսրայելին Մատույան Արաբիայի և Եգիպտոսի հետ դաշինքի մեջ ներգրավելը, որը ևս քննարկվում էր ԱՄՆ ղեկավարության կողմից:

Չնայած և՛ Մատույան Արաբիային, և՛ Եգիպտոսին գրավում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի հիմնական դաշնակից հանդես գալու հեռանկարը, և այլ պարագայում նրանք, թերևս, մեծ գոնունակությամբ կընդառաջեին նրա այդ ցանկությունը, սակայն փոփոխված իրադրությունը հարկադրում էր վերջիններիս զգուշավորությամբ վերաբերվել ԱՄՆ-ի նոր դիրքորոշմանը: ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացումն այդ պահին որքան ցանկալի, նույնքան և աննպատակահարմար էր, քանի որ նոր դժվարություններ կառաջացնեին այդ վարչակարգերի ներքին կյանքում, կարելի էր հարաբերությունները տարածաշրջանի պետությունների և, առաջին հերթին, արաբական տարբեր վարչակարգերի միջև՝ հակադրելով նրանց միմյանց:

Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, տարածաշրջանի երկրներին այդպես էլ չհաջողվեց խուսափել քաղաքական բարդ և հակասական զարգացումներից, բախումներից ու առնակատումներից, որոնք մեծ

չափով պայմանավորված էին նաև այնտեղ նոր գործունեների առաջացմամբ և ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության փոփոխությամբ:

ԳՆՈՒՆԻ ԱՐՏԱԿ (ՀԱԵ)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԿՈՒՐ-ԱՐԱՐԱՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎԱՅՐՁՆԵՐԻՄ

1. Կուր-արաքայան բնակավայրերը տարածված լինելով որչ Հայկական լեռնաշխարհում՝ այժի են ընկնում ոչ միայն բնակարանաշինական ավանդույթների քաղաքականությանը, այլև օգտագործված հատակագծման սկզբունքների պատկերմամբ:

2. Մշակույթի ուսումնասիրության նպատակով անհրաժեշտ է հստակ սահմանագատել բնակավայրերի տիպերը՝ քաղաք, գյուղաքաղաք, գյուղ: Դա խիստ դժվար է, քանի որ հենում քաղաքի և գյուղի տարբերակումը հստակ չէր գիտակցվում: Այսպես, հունական ավանդությունը քաղաքը հակադրում է ոչ թե գյուղին, այլ դաշտին: Շումերում ինչպես քաղաքը, այնպես էլ գյուղը բնորոշվում են URU քառով:

3. Ընդունված կարծիք է, որ կուր-արաքայան քաղաքակրթությունում բացակայում էր քաղաքային կյանքը: Դա կապվում է «կուր-արաքայան բնակավայրերում գաղափարական առաջնորդության սկզբունքի բացակայության հետ»:

4. Այս ներառությունը ստուգելու նպատակով կարելի է համեմատել կուր-արաքայան բնակավայրերի հատակագծային առանձնահատկությունները համաժամանակյա մերձավոր-արևելյան քաղաքների հետ: Մերձավոր-արևելյան քաղաքները բնորոշվում են հետևյալ գծերով. ա) տաճար, տաճարային համալիր և տաճարային տնտեսություն, բ) պարստ կամ որևէ այլ խոշոր հասարակական շինություն, գ) կայուն պաշտպանական համակարգ և միջնաբերդի առկայություն, դ) կարևոր դեր է կատարում բնակավայրի կանոնակարգված հատակագծումը, ընդ որում փորոցները հաճախ ունեն ոչ միայն զուտ գործառնական, այլև սիմվոլիկ դեր, հնարավոր է արարողակարգերի ճանապարհի առկայությունը, ե) որպես հատկանշական գիծ կարելի է ընդգծել քաղաքներում արհեստագործական քաղամասերի առկայությունը:

5. Ուսումնասիրելով կուր-արաքայան բնակավայրերը՝ դժվար չէ նկատել, որ նշված հատկանիշներինց զրեթե բոլորը առկա են Զ.ա. IV-III հազ. բնակավայրերում: ա) Նշված ժամանակաշրջանում ի հայտ են գալիս ուրույն ճարտարապետությանը բնորոշվող ծխական կառույցներ (Մոխրաբլուր, Մեծամոր, Ջրահովիտ, Զոսի Ծորեր, Թեքրի Ծղարտ, Ամիրանիս-Գոռա): Ի հայտ են գալիս նաև տաճարական տնտեսության և քրմական դասի ձևավորման մասին վկայող փաստեր (Մոխրաբլուր, Մեծամոր, Կվաջխեղերի, Խիզանմանք-Գոռա): բ) Հասարակական կառույցների մնացորդներ առկա են Հատիճում, Ամիրանիս-Գոռայում, Քիրբեք Քերակում: Հասարակական կառույցները, ինչպես նաև ծխական շինությունները, հաճախ տեղադրվում էին բնակավայրերի միջնաբերդում, ինչը վկայում է միջնաբերդի խոշոր տնտեսական, ծխական և, հավանաբար, քաղաքական նշանակության մասին (Մեծամոր, Հատիճ, Շահարմա-2): գ) Ի տարբերություն էնոլիթյան շրջանի, քառտիկ կառուցապատումից կուր-արաքայան ժամանակաշրջանում հանդես են գալիս հատակագծի կանոնակարգման տարրեր, ավելին, կարելի է սահմանագատել հատակագծման մի քանի ավանդույթ (Մոխրաբլուր, Հատիճ, Ամիրանիս-Գոռա): Հանդես են գալիս փորոցներ, որոնք ունեն նաև որոշակի սիմվոլիկ նշանակություն (Յիխիս-Գոռա, Ամիրանիս-Գոռա, Նորշում քեփե): Դարպասների ծխական խմաստավորումը հանդիպում է նաև Էլբարում, հավանաբար նաև Յանիկ-Թեփեում: դ) Կուր-արաքայան բնակավայրերի հատկանշա-

կան գծերից է ստանձին արհեստագործական հատվածների առկայությունը: Այսպես, մետաղագործությունը բնակավայրի մեկ հատվածում կենտրոնացված է Բարա Դերվիշ, Խան-Թեյե, հավանաբար, Մեծամոր բնակավայրերում, խեցեգործությունը՝ Վեյիքենտում, քարագործությունը՝ Թեքրի Ծղարայում:

6. Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Զ.ա. IV-III հազ. Հայաստանում առաջանում են քաղաքային բնակավայրեր:

7. Պետք է նշել, որ նման բնակավայրերը առավել տարածված են Շիրակ-Ջավախքյան տարածաշրջանում, հազվադեպ չեն նաև Արարատյան դաշտում, Իշխանագետի հովտում և Պարսկաստանում, սակայն գրեթե չեն հանդիպում Շիրա Զարքյան տարածաշրջանում:

ԳՆԱՆՆՅԱՆ ՏՈՐՔ (ԵՂՏ)

ՅԵՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻ ՄԻ ԶԱՆԻ ԳՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ (ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՍՐԱՀԱՐՔ)

Հայկական լեռնաշխարհը և հարակից տարածքները հնուց ի վեր բնակեցված են եղել տարբեր ծագում ունեցող ցեղերով, որոնց անունները ժամանակի ընթացքում մասամբ դարձել են հասարակ անուններ և ստացել բանահրական իմաստ, քեև չի բացառվել հակառակ երևույթը՝ հասարակ անունների վերածումը ցեղանունների:

1. **Դուժ** - Մի հին ցեղի անուն, որը զրարարում ստացել է «բարբարոս, վայրենի» իմաստը: Հմմտ. նաև *դժակ*, *դժական* «բարբարոս», և *դժարան* «գժնի ու ժանա խառոդ» բառերը, որոնք, փաստորեն, իրենց կազմությամբ հար և նման են հուն. *բարբարոս* բառի ծագմանը. վերջինս սկզբնապես նշանակել է «անհասկանալի լեզվով խառոդ, բարբաջող»: Ըստ երևույթին, դուժ ցեղանունը պահպանվել է զազաների մոտ, որոնք Դերսիմի Դուժիկ-բարա լեռան անունով կոչվել են նաև դուժիկներ:

2. **Սաղա** - Ցեղ, որի անունով կոչվեց Խաղտիք մահանգը: Ստացել է «կոշտ, կոպիտ» իմաստը, որից՝ *խաղտայուր*, *խաղտայեզու*, *խաղտախաղտ* բառերը՝ բոլորն էլ «կոշտ ու կոպիտ բարբառով խառոդ» նշանակությամբ (հմմտ. նաև *խաղտի* «խառանակություն» բառը):

3. **Կորճ** - Կորճայք մահանգի անունից, որտեղ բնակվում էր **կորտիճ* ցեղախումբը: Ստացել է «ծուռ, քյուր, անհարթ» նշանակությունը, որից կազմված են *կորճայ*, *կորճայեզու*, *կորճարառ* «աղավաղ լեզու» բառերը:

4. **Կորո** - Այս ցեղի անունով է կոչվել Կորոդուք գավառը, որից՝ *կորո* «խապան, անմշակ հող» բառը. հանդիպում է դեռևս Վանի տերության սեպարձև վիմագրերում (*quddi*) «ամայի» իմաստով:

5. **Խուժ** - Խուժաստանի (ներկայիս Իրանի Խուզիստան մահանգի) ցեղերը (խուժիկներ), որոնք հնում ավազակային հարձակումներ էին գործում շրջակա տարածքների վրա, այստեղից էլ՝ *խուժան* (*խուժան*), *խուժել*, *խժական* («բարբարոս») բառերը և ընդհանրապես՝ *խուժարժուժ* ցեղեր, *խժդոթյուն* «խառվություն» և այլն:

Թվարկած ցեղերի լեզուները, հավանաբար, ոչ հնդեվրոպական էին, չնայած այս ենթադրությունը հաստատող կամ հերքող հավաստի փաստեր առ այսօր չկան: Անկախ լեզվական պատկանելությունից՝ նշված գրեթե բոլոր ցեղերը ժամանակի ընթացքում մտան հայ ժողովրդի կազմի մեջ, բայց և այնպես երկար դարեր պահպանեցին իրենց արտասանական առանձնահատկությունները, ինչի մասին վկայում են հայ միջնադարյան քերականները:

Հայ և ոչ հայ (խաժաղուժ, բարբարոս) ապրերակումն, ըստ էության, հիմնված էր կացութաձևերի տարբերության վրա. **կորոզվագիները, խաղտեցիները, դուժիկներն** ու մյուսները, բռնվորությունից անցնելով նստակեցության, բողնելով քալանի և ավազակության նախկին սովորայքը, աստիճանաբար դառնում էին նաև հայալեզու, ինչն, իր հեքքին, նպաստում էր կենտրոնական իշխանության ամրապնդմանը: Բնականաբար, մ.թ. II հազ. սկզբներից, պետականության թուլացմանն ու վերացմանը համընթաց, զնալով վերականգնվեց տարածաշրջանի հին կացութաձևերից մեկը: Այս անցումը կրկին ուղեկցվում էր լեզվափոխությանը, ընդ որում ավազակաբարոս բռնվոր ցեղերը մեծ մասամբ դառնում էին արարախոս կամ իրանախոս՝ խառնվելով հարավից եկած մեծաթիվ ալիքների հետ (հմմտ. *Անանուն Եղևացի*):

Հենց արարական շրջանում հիմք դրվեց տարածաշրջանի բնակչության տարբերակմանը երկու խաշոր միավորների՝ *Ֆայահներ* (ֆայաներ, հայեր) - «ժողագործներ» և *քրդեր* - «լեռնական հովիվներ», ըստ որում երև հայերը բնորոշվում էին էրնիկ միատարրությամբ, կրոնական, ազգային և գրավոր կայուն ավանդույթներով, սալա քրդերը տարածագում ցեղերի մի ամբողջություն էին, որոնց միավորում էր ընդհանուր կացութաձևը: Հետագայում քրդական «խալվի» ատանձին ներկայացուցիչների մեջ, որոնք կրթվում և գրաճանաչ էին դառնում, հղանում էր ազգային ինքնագիտակցության գաղափարը: Քրդերի՝ իսլամ ընդունելուց հետո *քուրդ* և *Ֆայահ* տարբերակումն ամրապնդվեց նաև կրոնական սահմանազատումով: Այսուհանդերձ, մինչ օրս պահպանվել են այդ ժողովուրդների հավատալիքների, մտածելակերպի և պրիմիտիվ աշխարհընկալման ընդհանրությունն ու նմանությունը:

ԳՐԱԳՆԱԿ ԿՍՄՆ (ԱԲ)

ՀԱՅԱՍՏԱՆ. ՔՐԳԱԿՆՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ԳՐԱԿՆՆ ՔՐԳԵՐՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. Հայաստանում գրական քրդերենի կազմավորման պայմանների և հիմքերի ձևավորման գործում նշանակալից դեր է խաղացել և առաջնային է հանդիսանում հայկական տառերով քրդական գրությունը, որն, ըստ արխիվային նյութերի, սկսվում է մոտավորապես XVIIIդ. սկզբից (միգուցե քիչ ավելի վաղ) և ժամանակագրականորեն բաժանվում է երկու շրջանի՝ նախասովետական և սովետական:

2. Հայկական գրաֆիկայով քրդական այբուբենի ստեղծումը և նրանով քրդական գրության հիմնումն ու տարածումը իրականացավ բացառապես հայ լայնախոս նտավորականների՝ ջանքերով և նրանց մեծածավալ գործունեության շնորհիվ: Նախասովետական շրջանի հայաստա քրդական գրությունը ներկայացված է քազմաթիվ արխիվային և հրատարակված գործերում: Գրանցից են, մասնավորապես, 1711թ. Մովսես Տաբևացու գրի առած քրդական մի շարք թերթերն ու ռուսնավորները՝ գեռեղված նրա հայերեն լեզվով ներկայացված ձեռագիր մատյանում, 1793թ. Հռոմում լույս տեսած ավետարանական տեքստերի ժողովածուով՝ Կեղ զասձ հայաստա քրդերեն գրադարանը (ստաջին անգամ Մարսիմ Խամբլյանի կեղմից վերծանված): 1861թ. Մկրտիչ Տիգրանյանի կողմից ստեղծված ու հրատարակված «Քրդերեն և հայերեն այբբենարան» վերնագրով աշխատանքը, Խաչատուր Արամյանի 1846թ. գրի առած ժողովրդական բանասիրության արժեքավոր հուշարձանները՝ գերմաներեն թարգմանություններով:

Հայաստան քրդական գրության բնագավառում առանձնահատուկ տեղ են գրավում Կոմիտասի կողմից գրի առնված քրդական ժողովրդական երգերը (Մտևվա 1903թ.), ինչպես նաև Հակոբ Մոմջյանի 1949թ. Բեյրութում հրատարակված «Հայոց լեզուն քույր բերնի մեջ և փոխադարձաբար» վերնագրով դասագիրքը և այլն:

Հայաստան քրդական գրությունը առանձնահատուկ վերելք ապրեց սովետական շրջանում: 1921թ. էջմիածնում լույս է տեսնում Հակոբ Դազարյանի կողմից ստեղծված «Շամա» վերնագրով դասագիրքը, որն իր տեսակի մեջ առաջին դպրոցական դասավանդման ձեռնարկն էր, չնայած դրանից հետագայում օգտվեցին նաև մեծահասակները և սկիզբ դրվեց անգրագիտության վերացմանը Անդրկովկասյան քույր ազգաբնակչության շրջանում:

3. Հայաստանում հայաստան քրդական գրությունը խոշոր դեր կատարեց քույր ազգաբնակչության շրջանում կրթության տարածման, լուսավորչական աշխատանքների ծավալման գործում: Այն նպաստեց գրության մշակմանը ու տարածմանը, անհրաժեշտ հիմք հանդիսացավ ապագայում գրական քրդերենի կազմավորման ճանապարհին Հայաստանի պայմաններում:

ԽՍՉՍՏՐՅԱՆ ԵԿԱՏԵՐԷՆԱ (ԵՊՏ)

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԱԶԳՄԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ ՍՈՒՃԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՃԱՐԻԳԱԳԳԻՆ ԱԹԹԱՐԻ «ՎԱՐԸ ՍՐՔՈՅ» ՏԵՎՇԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Յուրաքանչյուր կրոնի տարածման ամենակարևոր նախապայմաններից մեկը եղել է քաղաքացիությունը, որի հիմքում ընկած է մարդկային հոգեբանության վրա որոշակի ազդեցության միջոցների կիրառումը: Որքան ճիշտ և դիպուկ ընտրվեին դրանք և որքան ավելի համապատասխանեին մարդկանց իդեոլոգիան ու ակնկալիքներին, այնքան ավելի արդյունավետ կլինեին քաղաքացիությունը և ավելի արագ կհամալրվեին ավյալ կրոնի հետևավորների շարքերը:

Նմանատիպ ներազդման միջոցները կարևորել են նաև սուֆի հեղինակները, ի քիվս որոնց հարկ է նշել նշանավոր սուֆիներ Ֆ. Աբբասին, Ա. Չամիին և այլոց:

Չեկուցման մեջ մենք դիտարկել ենք դրանցից մի քանիսը, որոնց հաճախ է դիմել Աբբասը իր «Վարք սրբոց» աշխատության մեջ: Նշենք մի քանիսը.

1. Սրբերի կոչման արժանացած սուֆիներից շատերը, ըստ բերված վարքերի, ծագումով չեն տարբերվել մյուս հավատացյալներից: Այս հանգամանքը շեշտելը նպատակ ունեց ցուցադրել, որ ցանկության դեպքում ամեն խավի ներկայացուցիչ կարող է աշխարհիկ կյանքից հրաժարվելով՝ հոգևոր կատարելագործման ճանապարհով ճանաչել Բարձրային եւ արժանանալ աստվածային դրավտի:

2. Նրանք, ովքեր կապավինեն միայն Աստծուն, Տիրոջ մշակական օգնության և հովանու տակ կլինեն:

3. Առավել նվիրյալ հավատացյալներին Աստված օժտում է մի շարք առանձնահատկություններով, ինչպիսիք են հրաշագործությունը, հիվանդների բուժումը և այլն:

4. Աբբասը, ներկայացնելով մեծանուն սուֆիների վարքը, գրեթե միշտ նկարագրում է այն բարիքները, որոնց երկնային կյանքում Տերը արժանացնում է իր նվիրյալներին: Ընդ որում, նկատվում են դեպքեր, երբ երկրային նյութական արժեքները տեղափոխվում են երկնային գոյության ոլորտ: Սա ևս հոգեբանական ներազդման յուրահատուկ մի

միջոց է, որը քեւ կիրառվել է նաև քրիստոնեական ավանդույթում, սակայն առավել զարգացում է առացել իսլամում և, մասնավորապէս, սուֆիզմում:

Սուֆի սրբերի վարքագրությունը և վերջինիս առնչվող բազմաթիվ խնդիրներ համեմատաբար րիչ են հետազոտված, մինչդէռ դրանց ուսումնասիրությունը լույս կսփռի իսլամական ավանդույթի ցարդ շնկնարանված մի շարք առանձնահատկությունների վրա:

ԳԱՐԱԳՆՏՅԱՆ ՆԱԲԲԱ (ԵՂՏ)

**ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ՌԵԱԼԻՉՄԸ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՌՃԸ ԹԱՌԻՏԻԿ ԱԼ-ՀԱՔՆԻՄԻ
«ԳԱՎԱՌԱԿԱՆ ՔՆՆՉԻ ՕՐԱԳՐՈՒՄ»**

Եգիպտական գրողների համաստեղության մեջ առկայծում է խոշոր մի աստղ՝ Թաուֆիկ ալ-Հաքիմը: Բռուն կյանքով ապրած այս արձակագիրը և դրամատուրգը ծնվել է իրավաբանի ընտանիքում, Եգիպտոսի ադ-Դենաջաթ գյուղում: Կահիրեի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտելուց հետո նա ուսումը շարունակում է Սոբրոնում: Փարիզում նա խորը ուսումնասիրում է եվրոպական գրականությունը և արվեստը:

Նշանակվելով 1929 թ. եգիպտական մի զավառի քննիչ՝ նա արդեն գրել էր մի շարք պիեսներ, այդ քվում և սիմվոլիստական «Զարամձավի մարդիկ» պիեսը:

Եգիպտական զավառային քննիչ լինելու տարիները նա նկարագրել է «Գավառական քննչի օրագրում»: Այս ինքնակենսագրական վիպակը քննադատական ուղղություն էր բռնել պաշտոնավորների դեմ: Ուշադրության արժանի է այն փաստը, որ վիպակը գրված է նոր ռժով՝ իբրև քննիչի օրագիր, որտեղ նա օր առ օր ներկայացնում է իր հոգեկան աշխարհը և աշխատանքը, և սյուժեի պարզությամբ՝ գրքի հենց սկզբում կատարվում է սպանություն, որը վերջում չի բացահայտվում: Սյուժեի հիմնական կողմնակիցներն ծավալվում են այս սպանության շուրջ: Այս փոքր վիպակում Հաքիմը վարպետորեն ներկայացրել է զավառի կյանքի առանձնահատկությունները, ֆելլախների ծանր և անպաշտպան վիճակը, իրավապահ մարմինների անտարբերությունն ու անխելությունը, եվրոպական օրենքների և մահմեդական հասարակ ժողովրդի կյանքի անհամատեղելիությունը: Գրելով գյուղի մասին՝ հեղինակը ներկայացնում է ամբողջ պետության վիճակը: (Գյուղը իրենից ներկայացնում է պետության փոքրացված տարբերակը):

1930-ական թ. Եգիպտոսի քաղաքական պայմաններում Թաուֆիկ ալ-Հաքիմի այս վիպակը հեղինակի քաղաքացիական վեհ զգացմունքների արտահայտությունն է: «Գավառական քննչի օրագիրը» և Հաքիմի մյուս ստեղծագործությունները, որոնցում խիզախորեն քննադատվում են եգիպտական իրականության արատները, հիմք դրեցին Եգիպտոսի գրականության քննադատական ռեալիզմին:

ԿՈՍՏԵԿՅԱՆ ԲՐԵՍՏԻՆԵ (ԱԲ)

ԱՐՈՒ-ԱՌ-ՌԱԶԱԿ ԻՐՆ ՆԱԶՏՅԿՈՒԼԻ ԳՈՒՄՐՈՒԼԻԻ «ՄԱՍՍԵՐ-Ե ՍՈՒԼ-ԹԱՆԻ» ՊԱՏՄԵԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅՍՍՅԱՆԻ XIX ԳԱՐԻ ՍԿՋԲԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդ-առ-Ռազակ Դումբուլիև Իրանի XIXդ. պարստական պատմագիրներից է, որի «Մասսեր-ե Սուլթանիե» (պրակ. «Արքայական հիշատակարան») պատմական

աշխատությունը ընդգրկում է Իրանի քաղաքական պատմության XVIIIդ. կեսերից մինչև 1813թ. ընկած ժամանակաշրջանը: Այն ունեցել է երկու հրատարակություն, առաջինը՝ Թավրիզում 1241 հ. ք. (հմպտ. 1826/1827թ.), երկրորդը՝ 1392 հ. ք. (հմպտ. 1971/1972թ.):

Իրանցի պատմագիրը (ծնվ.1762/3, մահ.1827/8) եղել է բազմառանգ Աբրահամ Միրզայի գրագիրներից, և ակամատես լինելով ռուս-պարսկական 1804-1813թթ. պատերազմի առանձին իրադարձություններին, վերը նշված աշխատության մեջ շարադրել է իր աչքով տեսած կամ էլ հավաստի աղբյուրներից քաղած տեղեկությունները: «Մասաեր-ե Մուլթանիե» պատմագրական երկի հաղորդումները Արևելյան Հայաստանում XIXդ. սկզբին ծավալվող քաղաքական իրադարձությունների շուրջ բարձր է գնահատվել ռուս նշանավոր արևելագետ Ի. Պ. Պետրուշևսկու կողմից:

Արդ-առ-Ռազակ Գումբուլին ընդարձակ տեղ է հատկացրել ռուս-պարսկական պատերազմի ռազմական գործողությունների նկարագրությանը: Նրա հաղորդումներին, սակայն, պետք է զգույշ վերաբերվել, քանի որ պարսկական պատմագիրը, իր երկը գրելով շահական արքունիքի պատվերով, առանձին դեպքերում քույլ է տվել պատմական փաստերի աղտոտումներ: Նախքան նրա հաղորդումներին հավատ ընծայելը անհրաժեշտ է համեմատել դրանք ավյալ ժամանակաշրջանի այլ աղբյուրների և հատկապես ռուսական պատմագրության նյութերի հետ: «Մասաեր-ե Մուլթանիե» աշխատության լուրջ բեռություններից է այն, որ իրադարձությունները մեծ մասամբ ներկայացվում են իրանական կողմի համար նպաստավոր լույսի տակ: Գրեթե բոլոր խառը ճակատամարտերը, բացի Ալանդուզի վերջնական պարտությունից (1812թ. փետր.), «Մասաեր-ե Մուլթանիե»-ում ավարտվում են պարսկական կողմի հաղթանակով, ընդ որում, հեղինակը հաճախ ոտճացնում է կռիվներին մասնակցող ռուսական զորքերի քիվը: Չնայած վերը նշված բեռություններին, իրանական սկզբնաղբյուրը կարևոր լրացումներ է կատարում ավյալ ժամանակաշրջանի պատմության մեջ: Գրանք վերաբերում են հատկապես պարսկական կողմի այնպիսի ձեռնարկումներին, որոնց ռուսական կողմը չի մասնակցել, և հետևաբար ռուսական աղբյուրներում դրանց մասին մանրամասն ու հավաստի տեղեկություններ չկան: Այդպիսիք են, մասնավորապես, հեղինակի հաղորդումները Իրանի տիրակալների և Երևանի, Նախիջևանի ու Դարբարաղի խաների համագործակցության մասին: Արդ-առ-Ռազակ Գումբուլին կարևոր վկայություններ է հաղորդում Ռուսաստանի հպատակությունն ընդունած Դարբարաղի Իբրահիմ խանի՝ 1806թ. Իրանի կողմը հակվելու և նրա օգնությամբ ռուսական զորքերին իր երկրից դուրս բշկելու մտադրությունների մասին: Ըստ իրանցի պատմագրի, նման դիքքորոշում է հանդես բերում 1811թ. նաև նրա թոռը՝ Ջաֆար Դուլի աղան, որը իրեն հպատակ ջերթայիլությունը քաղած ցեղի հետ անցնում է Իրանի կողմը: Ժամանակակից աղբյուրներից պատմաբանները անհիմն կերպով նրանց ռուսական կողմնորոշում են վերագրում, սակայն, ինչպես ցույց են առվիս իրանցի պատմագրի վկայությունները, Դարբարաղի խանն ու տեղի մահմեդական ցեղերը, ելնելով Անդրկովկասում ռուսական և պարսկական ուժերի հարաբերակցությունից, հաճախակի փոփոխել են իրենց դիրքորոշումը Իրանի նկատմամբ:

Ռուս-պարսկական 1804-1813թթ. պատերազմի ընթացքում պարսկական ասպատակությունների հետևանքով ծանր ավերածությունների է ենթարկվում Դարբարաղը, խիստ նվազում է նրա բնակչությունը: «Մասաեր-ե Մուլթանիե» երկում հատակ արտացոլված է Դարբարաղի ինչպես մահմեդական առանձին ցեղերի, այնպես էլ տեղի հայ բնակչության վերաբերմունքը հաճախակի իրենց հայրենիքը ներխուժող պարսկական զորագնդերի նկատմամբ: Մանրամասն ավյալներ կան պարսկական ջոկատ-

ների կողմից կազմակերպած Դարաբաղի բնակչության բռնազաղերի մասին: «Մասսեր-և Սուլբանի» երկուսն արժեքավոր տեղեկություններ կան 1810թ Բարզուշատում, իսկ 1811թ Դափանում անբացած հայ բնակչության պարսկական զորագնդերի դեմ մղած ինքնապաշտպանական կռիվների մասին:

ՀՈՎՀԱՆՆԵՐԱՅԱՆ ԱՆԳՐԱՆԻԿ (ԵՉԿ)

**ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ԻՊՏԱՑՈՒՄ XXԳ. ՍԿՋԲԻՑ
ՄԻՆՁԵՎ 1960-ԱԿԱՆ ԹԹ.**

XXդ. վերջում իրենց ամբողջ սրտությամբ միջազգային քաղաքականության մեջ կրկին վեր են բարձրացել ազգային փոքրամասնությունների խնդիրները: Դրանք կարգավորող միջոցների մշակումն ու լուծումների որոնումը պահանջում են փոքրամասնությունների հիմնահարցերի յուրջ ու համապարփակ ուսումնասիրություններ: XXդ. արաբական աշխարհում ծագած փոքրամասնությունների խնդիրներից քերև ամենահիշարժաններից է հրեական հարցը: Ինչպես գիտենք, Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում, Սիրիայում ու Իրաքում գոյություն ունեին հոծ հրեական համայնքներ: Սակայն Պաղեստինում հրեական պետության ստեղծմանն ուղղված շարժումը ծանր հարված հասցրեց այդ երկրներում բնակվող հրեաներին, պատճառ դարձավ նրանց հալածանքներին և համայնքների քայքայմանը: Դեռևս XIXդ. վերջին պատմության քառերարբն իջավ սիոնիստական շարժումը, որի հիմնական նպատակը հրեական պետական հողերի վրա Իսրայելի պետության հիմնումն էր: Սիոնիզմը սկսեց վայելել ամբողջ աշխարհի հրեաների աջակցությունը, հասկապես 1917թ. Բարֆորի դեկլարացիայից հետո, որով Մեծ Բրիտանիան պարտավորվեց օգնել Պաղեստինում հրեական օջախի ստեղծմանը: Դրան հետևեցին այդ նպատակին ուղղված կոնկրետ քայլեր, որոնցից էր բրիտանական մանդատի տակ գտնվող Պաղեստինում հրեաների բնակեցումը, նրանց քաղաքական կազմակերպությունների հիմնումը և այստեղից արարների դուրամդումը: Այս ամենը, հասկանալիորեն, արաբական երկրներում առաջ բերեց հակահրեական տրամադրությունների կտրուկ աճ և ուղղակիորեն ազդեց այս երկրների հրեական համայնքների վրա:

Արաբական երկրներից Եգիպտոսում էր գտնվում հրեական ամենամեծ գաղթավայրերից մեկը: Նրանք այստեղ բնակվում էին դեռևս անհիշելի ժամանակներից: Հրեաների նոր գաղթի այլքը Եգիպտոս սկսվեց Մուհամմեդ Ալիի իշխանապետության տարիներին, 1850-ական թթ. նրանց թիվն այստեղ հասավ շուրջ վեց հազարի: 1948թ. արաբա-իսրայելյան պատերազմի նախօրյակին հրեական համայնքն արդեն հաշվվում էր շուրջ 80.000: Հրեաները մյուս փոքրամասնությունների՝ հույների, իտալացիների և հայերի հետ միասին XIXդ. վերջից սկսեցին կարևոր դեր խաղալ Եգիպտոսի մշակութային ու սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Այս փոքրամասնությունները որոշակի արտոնություններ ունեին և վայելում էին անգլիացի գաղութարարների հովանավորությունը: Սակայն Անգլիայի դիրքերի բուրքացումից և հատկապես 1936թ. անգլո-եգիպտական համաձայնագրից հետո, որով Եգիպտոսին տրվեց ավելի լայն անկախություն, նրանց վիճակը երկրում վատացավ: Փոքրամասնությունների վիճակը վատթարացավ 1930-ական թթ. վերջերին և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ երկրում գլուխ բարձրացրեցին կրոնական ու ազգային ծայրահեղականությունը, հակաբրիտանական ու հակահրեական տրամադրությունները: Արդեն 1938-39թթ. Կառիրեում մի շարք հակահրեական ցույցեր կազմակերպվեցին:

Բոլոր փոքրամասնությունները և հասկապես հրեաները դիտվում էին որպես անզիական գաղութարարների կողմնակիցներ: Ամենևին էլ պատահական չէ, որ այս ժամանակահատվածում լայն տարածում գտան «Եզիխատսը եզիպատացիների համար» կարգախոսը և այսպես կոչված եզիպատականացման քաղաքականությունը: Այստեղ պետք է նշել, որ այս քաղաքականությունը, ինչպես նաև գործարարության բնագավառում փոքրամասնություններին պարտադրված տաժնանվականները բացասական մեծ ազդեցություն ունեցան նաև հայ համայնքի վրա: Այս առումով ևս հետաքրքիր է հրեական համայնքի պատմության ուսումնասիրությունը, որովհետև այս քաղաքականությունը առավել արտահայտված ձևով ուղղված էր հենց նրանց դեմ:

Հակահրեական տրամադրությունների սրմանը Եզիպատսում էլ ավելի նպաստեցին արարա-խրայեյան պատերազմները: Դրանց պատճառով երկրում հրեաների շուրջ անվտանգության մթնոլորտ ստեղծվեց: Յուրաքանչյուր պատերազմին հետևում էին հրեաների մասսայական ձեռքարկություններ, արտաքսումներ, ունեցվածքի բռնագրավումներ: Չնայած պատերազմներին հետևող հարաբերական հանդարտ վիճակներին, հրեաների գաղթը Եզիպատսից հասավ մեծ չափերի և արդեն 1970-ական թթ. միայն մի քանի հարյուր հրեաներ էին մնացել Կահիրեում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (Գ.ՉՄԻ)

ՈՒՍՅՓՈՒԱՆՔԵՅՇԵՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԱՐՂԵՍ ԻՍՐԱՅԵԼԱՊԱՆՏԻՆՅԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒՅՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆՈՐ ՓՈՒՆ

Մերձավոր Արևելքը արդեն մի քանի տասնամյակ համարվում է միջազգային հակամարտության օջախներից մեկը: Արարա-խրայեյական հակամարտության ձգձգվող ընթացքը, մասշտաբները, որոնք, ինչ խոսք, դուրս են գալիս տարածաշրջանային շրջանակներից, և այն ազդեցությունը, որ բողոնում է հակամարտությունը, որոշում է նրա առանձնահատուկ դերը միջազգային հարաբերությունների համակարգում: Արարա-խրայեյական հակամարտության հիմնական պատճառներից մեկը մնում է արարական զգալի տարածքների օկուպացիան Իսրայելի կողմից, որոնք նվաճվել են 1967թ.:

1993թ. Օսլոյում Իսրայելի և Պաղեստինի միջև ձեռք բերվեց համաձայնագիր, ըստ որի մինչև 1999թ. մայիսի 4-ը Իսրայելի զորքերը պետք է դուրս բերվեն Հորդանան գետի արևմտյան ափի 90 տոկոսից և պետք է լուծվի նաև Երուսաղեմի կարգավիճակի հարցը: Այդ ընթացքում պաղեստինյան իշխանություններին ինքնավարության կարգավիճակով հանձնվեցին Ղազայի հատվածը և արևմտյան ափի 3 տոկոսը: 1997թ. հունվարին կնքվեց Հերբոնի համաձայնագիրը, որով իսրայելական զորքերը դուրս բերվեցին քաղաքի գգալի մասից և քաղաքին շնորհվեց ինքնավարություն:

Սակայն իսրայելական զործընթացը սկսեց հետընթաց ապրել 1997թ. մարտից, երբ Իսրայելի վարչապետ Նաբանյահուն հայտարարեց Արևելյան Երուսաղեմում հրեական նոր բնակավայրերի շինարարությունը շարունակելու մասին: Խաղաղության գործընթացը մտավ փակուղի:

Մեկ տարի անց, 1998թ. մարտին, ԱՄՆ-ը հանդես եկավ նոր առաջարկությամբ: Այն Իսրայելի նկատմամբ ճնշման երանգներ էր պարունակում և պահանջում էր դուրս բերել իսրայելական զորքերը արևմտյան ափի տարածքների 13 տոկոսից: Իսրայելը սյառաատականություն հայտնեց լավագույն դեպքում զորքերը դուրս բերել տարածքների միայն 9 տոկոսից, իսկ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը սրահանջում էր խնդրո առարկա շրջանի 30 տոկոսից զորքերի դուրս բերում:

1998թ. հոկտեմբերի 15-ին ԱՄՆ-ի նախածեղնությամբ Մերիլենդ նահանգում, Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող Ուայ - Փլանքեյշն վայրում սկսվեցին քանակցությունները ՊԱԿ-ի ղեկավար Յասեր Աբախաթի և Իսրայելի վարչապետ Նաբանյախուի միջև մասնակցությամբ ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլլ Էլինթոնի, պետքարտուղար Մալլեն Օլբրայթի և միջինարևելյան խաղաղության գործընթացի հարցերով ԱՄՆ-ի ներկայացուցիչ Դե-միս Ռոսի: Երկարատև և դժվարին քանակցություններից հետո կողմերը հանգեցին հետևյալ համաձայնագրին:

1. «Ապահովություն»: Պաղեստինյան իշխանությունները պարտավորվում են հանդուրժողականությամբ չցուցաբերել ահաբեկչության հանդեպ և ԱՄՆ-ի ներկայացուցիչներին, մասնավորապես, Կենտրոնական հետախուզական վարչություն, ներկայացնել հակահաբեկչական ծրագիր: Առաջարկվում էր պաղեստինյան ոստիկանական ուժերը իջեցնել 43.000-ից 30.000-ի:

2. Պաղեստինյան պատվիրակությունը համաձայնվեց հանել Իսրայելի վերացման վերաբերյալ բոլոր կետերը իրենց ազգային կանոնադրությունից:

3. «Ապահով ուղի»: Իսրայելը համաձայնվեց վերաբացել Դազայի օդանավակայանը, ինչպես նաև երկու անվտանգ ճանապարհի ապահովել արևմտյան ափի և Դազայի միջև:

4. «Եռակողմ կոմիտե»։ Որոշվեց ստեղծել ամերիկա-իսրայելա-պաղեստինյան կոմիտե, որը պետք է հանդիպի երկու շարաքը մեկ անգամ՝ որոշելու ապահովության և ահաբեկչության հետ առնչվող հարցերը:

5. «Հող խաղաղության փոխարեն»: Իսրայելը պարտավորվում է հետ քաշել իր զորքերը արևմտյան ափի 13.1 տոկոսից: Պաղեստինյան իշխանությունների լրիվ վերահսկողությանն է հանձնվում այդ տարածքների 14.2 տոկոսը: Դա նշանակում է, որ արևմտյան ափի 40 տոկոսը կանցնի պաղեստինյան իշխանությունների լրիվ կամ մասնակի վերահսկողության տակ:

Մեր կարծիքով իսրայելա-պաղեստինյան համաձայնագիրը որոշակիորեն կանխեց խաղաղության գործընթացի լրիվ դադարեցումը: Բայց առայժմ այն բավարար չէ առաջընթացի համար: Գտնում ենք, որ համաձայնագիրը որոշակի առումով շահեկան էր քե՛ Իսրայելի քե՛ Պաղեստինի համար՝ հետևյալ առումներով.

1. ՊԱԿ-ի կանոնադրությունից Իսրայելը վերացնելու կետի չեղյալ հայտարարումը նշանակում է Իսրայելի զոյատևման իրավունքի ճանաչում ՊԱԿ-ի կողմից:

2. Միջազգային հասարակության աչքում Իսրայելը կսկսի ներկայանալ խաղաղասեր և արաբների ահաբեկչական գործողությունները արդեն դժվար կլինի հիմնավորել:

3. ՊԱԿ-ը քեև զգալիորեն նահանջեց Օսլոյի համաձայնագրից, քայց, այդուհանդերձ, նրա հսկողության տակ են անցնում նոր տարածքներ: Բացի այդ, քանի որ Աբախաթի վարչակազմի ֆինանսական վիճակը խիստ անմխիթար էր, խոստացվող ամերիկյան օգնությունը ճիշտ ժամանակին էր:

4. Համաձայնագիրը կտալի Սիրիային և Լիբանանին ի վերջո Իսրայելի հետ կնքել խաղաղության պայմանագրեր: Համաձայնագիրը լուրջ քայլ կարող է լինել հակամարտության կարգավորման գործընթացում:

ԳԱՐԲԱԶԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՏ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՋԻՐՆԵՐԻ ԶԱԹԻՄՅԱՆ ԽԱՆԻՑԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցաթիմյան խալիֆայությունը (969-1171) իր ուրույն տեղն ունի Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի միջնադարի պատմության մեջ: Այն Եգիպտոսի պատ-

մուրյան ամենահետաքրքիր և միևնույն ժամանակ սակավ ուսումնասիրված էջերից մեկն է: Մեզ համար Ֆաբիմյան խալիֆայության պատմության ուսումնասիրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացնում նրա գոյության ողջ ընթացքում հայագի պետական, ռազմական և հոգևոր գործիչների ունեցած մեծ դերով:

Մելչուկ-քուրբական ավերիչ արշավանքների պատճառով հայ ռազմական և քաղաքական գործիչները գաղթում են Հայաստանից և հաստատվում Մերձավոր Արևելքում, իսկ այնուհետև օգտվելով ստեղծված բարենպաստ պայմաններից ու իրենց ընձեռնված հնարավորություններից՝ անցան Եգիպտոս և քարձր դիրքեր գրավեցին Ֆաբիմյան պետությունում: Ամենադարձր պետական պաշտոնը, որին հասան հայերը, վեզիրն էր՝ խալիֆից հետո պետության երկրորդ դեմքը: Մակայն հաճախ խալիֆներն անշափահաս էին, և հայ վեզիրներն ստանձնելով նրանց խնամակալությանը՝ երկրում ամբողջ իշխանությունը կենտրոնացնում էին իրենց ձեռքում: Հատկապես աչքի ընկան Բադր ալ-Ջամալին (1074-1094), նրա որդի Ալ-Աֆղալ Շահնշահը (1094-1121) և Բահրան ալ Արմանին (Վահրան Պախլավունի 1135-1137), որը սերում էր Գ-րիզոր Մագիստրոս Պախլավունուց: Նա նաև Գ-րիզոր Վկայասեր կաթողիկոսի քեռորդին էր և Ներսես Շնորհալու հորեղբայրը:

Բացի հաջողությանը երկիրը կառավարելուց, հայ վեզիրները մեծ ուշադրություն էին դարձնում նաև Հայաստանից ու այլ վայրերից գաղթող հայերի հաստատմանը Եգիպտոսում և նրանց գաղթօջախը կազմակերպմանը: XI դ. 70-ական թթ. Եգիպտոսի հայկական գաղթօջախը այնքան է սովորաբանում, որ նրանք կարիք են գզում բարձրաստիճան հոգևոր առաջնորդի: Այցելելով Եգիպտոս՝ Գ-րիզոր Վկայասեր կաթողիկոսը հիմնադրում է եգիպտահայերի Առաջնորդական Աթոռը և արքայիսկուպուս ձեռնադրում Գ-րիզորիսին: Հայ վեզիրների հայանպաստ քաղաքականության շնորհիվ Եգիպտոսի հայկական գաղթօջախը շուտով սկսում է բարգավաճել և հայերի թիվը հասնում է շուրջ հարյուր հազարի:

Չնայած այն բանին, որ հայ վեզիրներից ոմանք կրոնափոխ էին եղել ու ընդունել մահմեդականություն, այնուամենայնիվ հայ գաղթըրը պահպանեց իր հավատքը և կրոնական ազատությունը, որին մեծապես նպաստում էր նաև Ֆաբիմյանների համդորժողական ու երբեմն բարյացակամ վերաբերմունքը այլադավան ժողովուրդների հանդեպ:

Ուշագրավ է նաև հայ վեզիրների, մասնավորապես Բադր ալ-Ջամալիի և նրա որդի Ալ-Աֆղալի կատարած ռազմական արշավանքները դեպի Սիրիա ու Պաղեստին և 1096թ. Երուսաղեմի գրավումը նրանց կողմից: Հատկանշական է, որ հայ վեզիրների օրոք Ֆաբիմյան բանակի կորիզը կազմում էին հայերը:

Բացի պետական և ռազմական գործերը վարելուց, անվանի հայ վեզիրներն Եգիպտոսում ծավալել էին նաև բուռն շինարարական գործունեություն՝ կառուցելով բազմաթիվ մզկիթներ, եկեղեցիներ, պարտաներ, պարիսպներ, որոնց մի մասը կանգուն են մինչև այսօր:

Վերջ շարադրվածը վկայում է, որ հայերը դեռ հին ժամանակներից աչքի են ընկել Մերձավոր Արևելքում և նրան հարող շրջաններում ոչ միայն որպես առևտրականներ, արհեստավորներ, ճարտարապետներ, զինվորներ ու զորավարներ, այլև հեռատես պետական գործիչներ, և Եգիպտոսի XI-XII դդ. Ֆաբիմյան ժամանակաշրջանը դրա վառ ապացույցն է:

Հայ վեզիրները և պետական գործիչները հսկայական դեր ունեցան Ֆաբիմյան պետության քաղաքական ու տնտեսական կյանքում և հայկական գաղթօջախի հետ միասին նպաստեցին Եգիպտոսի զարգացմանն ու հզորացմանը XI-XII դդ.:

**ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂՎՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՐ**

1. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ բացեց մի նոր էջ, որը դեռևս շրջված չէ: Ավելի քան երկու հարյուր տարի մարդկությունը փորձում է գնահատել նրա աշխարհացունց դեպքերը, կյանքի կոչել հոչակված գաղափարները: Այդ իսկ պատճառով հեղափոխության արդիականությունը նկատի ունենալով՝ կարևոր է քվում նրա գնահատումների ուսումնասիրությունը:

2. Հեղափոխության ազդեցության ոլորտներից դուրս չմնացին նաև հայերը: Հեղափոխության արձագանքները և գնահատումները՝ նրա սկսման պահից մինչև մեր օրերը, միանշանակ չեն: Դրանց ուսումնասիրումը հայ պատմագրության մեջ անհրաժեշտ չափով ուշադրության չի արժանացել: Լրագրային հոդվածներից և գիտական աշխատություններում հարևանցի հրատարակումներից գառ կարևոր ենք համարում մեծանուն պատմաբան Թադևոս Ավդաբեկյանի «Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և ժամանակակից հայերը» արժեքավոր հոդվածը: Մակայն նրանում հեղինակը խոսում է միայն Էջմիածնի կաթողիկոս Դուկաս Կարսեցու, ոռոսահայ հայոց քեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի գնահատականների և «Ազդարարում» տեղ գտած առաջին արձագանքների մասին:

3. Հայ պատմագրության մեջ, քվում է, Ղ.Ինճիճյանն առաջինն էր, որ խիզախեց գիտականորեն շարադրել Մենայի ավերում տեղ գտած դրամատիկ իրադարձությունները և տալ իր ժամանակի պատմագիտությանը համահունչ գնահատականներ, կատարել հետախոյուններ:

4. Լինելով Մեծ հեղափոխության ժամանակակիցը՝ մեծանուն գիտնականը XVIIIդ. վերջից մինչև XIXդ. 20-ական թթ. գաղափարական հասունացման և ինքնահասատման բարդ ուղի անցավ: Վերլուծելով իրադարձությունները և երևույթները՝ նա ձգտում էր այդ ամենը տեղավորել ազգային գաղափարախոսության իր աշխարհայացքում և նոր փուլը ծառայեցնել սեփական ժողովրդի զարգացմանը:

5. Մեծ հեղափոխության մասին Ղ.Ինճիճյանի տեսակետների ամփոփումը «Դարապատում» բազմախատոր աշխատությունն է: Նրանում հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել հսկայական փաստական նյութ Ֆրանսիական մեծ հեղափոխության պատճառների, սկզբի, ընթացքի և հետևանքների մասին: Այն դեռևս կարիք ունի հետագա ավելի խորք և մանրագնին հետազոտման:

6. Խորանուխ լինելով հեղափոխության պատճառների և ակունքների մեջ՝ Ղ.Ինճիճյանը դրանք զանում է Լուի XV-ի ժամանակաշրջանում: Նրա համոզմամբ երկրին ճգնաժամի հասցրին անհեռատես տնտեսական քաղաքականությունը, շտայլումները, դասային արտոնությունները, բարոյական անկումը և պատերազմները: Բարձր գնահատելով լուսավորական շարժման գիտակրթական ոգին՝ Ղ.Ինճիճյանը միևնույն ժամանակ մերժում է նրա ընդդիմադիր դիրքը կրոնի և եկեղեցու նկատմամբ, որը նրա կարծիքով նույնպես նպաստեց ճգնաժամի խորացմանը:

7. Ղ.Ինճիճյանը «հեղափոխություն» հասկացությունը չի օգտագործում, որի փոխարեն գրում է «փառվության» կամ «ապստամբություն» բառերը: Դրանով իսկ նա մերժում է հեղափոխության օրինականությունը, բայց ընդունում է նրա օրինաչափությունը, քանի որ ժամանակին բարեփոխումներ չկատարվեցին: Քրիստոնեական բարոյականությանը առաջնորդվող Ղ.Ինճիճյանը մերժում է հեղափոխության արյունալի ընթացքը:

Բարձր գնահատելով «Մարդու և քաղաքացու իրավունքների

հոշակագիրը», նա միևնույն ժամանակ դա համարում է ժամանակավրեպ, որը հանգեցրեց տխուր հետևանքների:

8. ՂԻճՆԻՃԵՅԱՆԸ յուրովի մտեցում ունի հեղափոխությանը ծնված Ֆրանսիական հանրապետության նկատմամբ: Հետևելով Շ.Մոնտեսքյոյին՝ նա գտնում է, որ հանրապետական կարգը պիտանի է միայն փոքր երկրների համար: Ուստի և, նրա կարծիքով, Ֆրանսիական հանրապետությունը ի վերջոստ դատասպարտված էր: Անս թե ինչու, նա նույն հեղափոխությանը ծնված Նապոլեոնի կողմից միաստակարար կարգի վերականգնումը համարում է օրինաչափ:

—
—

ՄԱՆՈՅԱՆ ԱՐՄԱՆ (ՏՄԷ)

**Գ.Ա.ՕԼԻՎԻԵՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈԼՍԱՀԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVIII ԳԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՌՈՐԳ)**

XVIII դ. վերջին բառորդի Արևելքի պատմության կարևոր եվրոպական աղբյուրների շարքին է դասվում Ֆրանսիացի ճանապարհորդ և դիվանագետ Գ.Ա.Օլիվիեի ուղեգրությունը:

1792թ. հոկտեմբերի վերջին Ֆրանսիական հանրապետության ժամանակավոր գործադիր խորհուրդը որոշում ընդունեց կազմակերպել քննադատներ Օլիվիեի և Բրյուգիերի ուղեւորությունը դեպի Թուրքիա, Եգիպտոս և Պարսկաստան: Բացի տարաբնույթ տեղեկությունների հավաքումից, պատվիրակությունը պետք է կատարեր մի շարք դիվանագիտական հանձնարարություններ, որոնք նպատակ ունեին ամրապնդել Ֆրանսիայի քաղաքական և առևտրական կապերն Արևելքի երկրների հետ:

1792թ. նոյեմբերի 7-ին Օլիվիեն և Բրյուգիերը Փարիզից մեկնում են Տուրն, սալա Մարսել, որտեղից 1793թ. ապրիլի 22-ին դուրս գալով՝ 1793թ. մայիսի 20-ին ժամանում են Կ.Պոլիս: Նրանք որոշ ժամանակ մնում են Կ.Պոլսում, այդ ընթացքում այցելում են Կրետե և Էգեյան ծովի մի շարք կղզիներ, իսկ 1794թ. հոկտեմբերին մեկնում են Եգիպտոս և Կ.Պոլիս են վերադառնում 1795թ. հուլիսին: Հետագայում (1801-1807թթ.) երատարակված իր ուղեգրության մեջ էլ Օլիվիեն հաղորդում է ուշագրավ շատ տեղեկություններ, որոնցից մեզ հետաքրքրող հարցերի շուրջ կան հետևյալ տվյալները. «Կ.Պոլիսը թուրքերի, հույների, հայերի, հրեաների, եվրոպացիների մի խառնուրդ է իրենից ներկայացնում, որտեղից էլ բխում է բարբերի, կրոնների և լեզուների մեծ բազմազանությունը: Թուրքերն այստեղ սովելի շատ են, քան մյուսները և տարածված են ամբողջ քաղաքում և նրա արվարձաններում: Հույները կազմում են բնակչության 1/6-ը. նրանք մի քաղաքային ունեն, տեղադրված նավահանգստի դիմաց, որը հայտնի է հունական ֆանարակի կամ ֆանալ անունով: Մի մասն էլ ապրում է Բերայում և Գարաբայում և ապրում են ֆրանկների մեջ: Հայերը մի քիչ են պակաս հույներից, նրանք ապրում են քաղաքի ներսում և արվարձաններում: Հրեաները ամենաքիչն են, ապրում են քաղաքի ներսում, որոշ թվով հրեաներ հաստատվել են Բերայում և Գարաբայում և միջնորդ են վաճառականների մոտ»:

Չափազանց ուշագրավ է նաև հայերի բնավորության և բարքերի նկարագրությունը: Այդ մասին Օլիվիեին գրում է, որ «հայերը վաճառական են. նրանք են Օսմանյան կայսրության մեջ, որ կատարում են ամենամեծ առևտուրը և դա անում են խելամուռներ: Նրանք համբերատար են, խնայող և անխոնջ: Նրանք ճանապարհորդում են Ասիայում և Հնդկաստանում, ունեն խառնուրդներ և գործակիցներ ամենուրեք: Մեծամասնությունը զբաղվում է արհեստագործությամբ, բանկիրներ են, մատակարարներ, և

փաշաների գործարարներ: Հազվադեպ են խտտումնազանց լինում, ճշտապահ են իրենց խտտումները կատարելիս: Նրանց պակասում է միայն կրթությունը և մի կատարություն, որը լինի ավելի արդարադատ և պակաս ճնշող, քան քուրքերի կատարությունն է, որպեսի դառնան անսահմանորեն հարգված մի ազգ»:

Արժեքավոր է նաև Օլիվիեի տեղեկությունը Կ.Պոլսի բնակչության քվարանակի վերաբերյալ: Նա գրում է, որ «այդ մեծ քաղաքի բնակիչները, դրա մեջ ներառելով նաև Բերա, Գալաթա, Սկյուտար և այլ քաղամասերի և Բոսֆորի ափերին տեղադրված շրջակա գյուղերի բնակչությունը, կարող են լինել ավելի քան 500000, ըստ այսուրի այն քանակության, որ այնտեղ օրական սպառվում է»:

ՄԱՐՏՈՅԱՆ ԼՈՒՍԻՆՆ (ԵՀԱՏ)

<ԱՏԵՉԻ ԱՌԱՋԻՆ ՂԱԶԱԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաֆեզի դագալների ճիշտ ընթերցումը, առավել ևս ճիշտ մեկնաբանումը եղել և մնում է իրանագիտության դժվարին խնդիրներից մեկը: Հատկապես բազմաթիվ քննությունների և ուսումնասիրությունների նյութ է հանդիսացել Հաֆեզի Դիվանում պահպանված առաջին դագալը, որը հակառակ նրա ռոջ պոեզիայի ընդհանուր ոգուն՝ սուֆիական-միստիկական գաղափարաբանության մնուշ է: Ավելին, ըստ միջնադարյան դիվանների կազմման օրենքների, այն առաջին տեղը չպետք է զբաղեցներ: Այդ է պատճառը, որ առաջին դագալը մեկնաբանվում է իր ստեղծման հետ կապված նախապատմությունների և հաֆեզյան ժամանակաշրջանի անկում ապրող սուֆիզմի քննության հիման վրա: Այն հանգամանքը, որ վերջինս հետացել է իրական սուֆիզմից և միայն ձևական բնույթ է կրում, ակնհայտ է: Բազմաթիվ փաստեր ապացուցում են, որ Հաֆեզը բարյացակամ չէր իր ժամանակի սուֆիների նկատմամբ: Այդ ամենով հանդերձ, մենք նրան տեսնում ենք մոզզերի զինեաանը, ռեդեների շրջապատում, որ նշանակում է, Հաֆեզը իր տուրքն է տվել ժամանակի ոգուն և այն գաղափարներին, որ ժառանգել է իր նախորդներից: Հաֆեզի առաջին դագալը իրոք սուֆիական այլաբանական հենք ունի, որը, սակայն, չի նշանակում, քն Հաֆեզը սուֆի է:

ՄԱՐՏՈՅԱՆ ԱՐՄՆՆ (ՀՅԹԷ)

ԹՈՒՐԿՄԱԿՐԱՆ ՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԳԻ ՓՈՒԼՈՒՄ

Թուրք-պարսկական հակասությունները գալիս են դարերի խորքից ու զնալով այդ հակասությունները այնքան են խորացել, որ դրանց կարգավորումը և լուծումը դարձել է անհնարին: Այս երկու հզոր պետությունների բախման կետը քե՛ սկզբունքային և քե՛ տարածքային առումով, որպես կանոն, հանդիսացել է Հայաստանը: Հայաստանը այս երկուսի միջև կատարել և կատարում է մի տեսակ բուֆերի դեր, որը զսպում է այս երկու երկրների հակասությունների վերաճումը բացարձակ առնակատման: Սակայն այժմ դրությունը որոշակիորեն փոխվել է: Հայաստանի համար «բուֆերի» դեր կատարելը կարող է դառնալ շահավետ՝ այն իմաստով, որ Հայաստանը կարողանա նրբանկատորեն օգտագործել Թուրքիա-Իրան հակասությունների ամբողջ փաթեթը՝ իր շահերից և նպատակներից ելնելով՝ ծառայեցնել դրանք նեփական ազգային և պետական ծրագրերի իրագործմանը:

Երբ խոսում ենք Թուրքիա-Իրան հակասությունների մասին, չենք կարող անտեսել երբորդ ուժը՝ Ռուսաստանի, որը միշտ մասնակից է եղել տարածաշրջանային գործընթացներին: Ռուսաստանը շատ հինուտ ձևով կարողացավ օգտագործել բուրք-պարսկական հակասությունները, առանձին-առանձին պարտության մատնեց նրանց, դուրս մղեց Անդրկովկասից և նրանց ազդեցությունը տարածաշրջանում հասցրեց նվազագույնի: Այս իմաստով, իհարկե, Հայաստանին չէր խանգարի օգտվել Ռուսաստանի բողոք հարուստ փորձից:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ Ռուսաստանի ազդեցությունը Անդրկովկասում (և ոչ միայն Անդրկովկասում) զգալիորեն նվազեց, Թուրքիան և Իրանը փորձեցին օգտվել ընձեռված հնարավորությունից և տարածել իրենց ազդեցությունը հեախորհրդային այդ արդեն իսկ «չեզոք» գոտում: Առաջին հերթին դա վերաբերվում էր մասնա-դական հանրապետություններին: Պետք է նշել, սակայն, որ Թուրքիան և Իրանը այդ երկրներում ազդեցության ապրածելով հանդերձ չէին կարող շտուգվել Հայաստանի Հանրապետության հետ, քանի որ վերջինս գտնվում էր այդ ազդեցության տարածման ճանապարհին: Թուրքիան և Իրանը ընտրեցին տարբեր մեթոդներ և գործելաոճեր: Եվ եթե Իրանը իր քայլերը կատարում էր շատ զգուշավոր, անգամ ոչ համարձակ, ապա Թուրքիան շատ ակտիվ ու գործնական, մաս շտապողական էր այդ հարցում: Այս ֆոնի վրա էլ ավելի լարվեցին Թուրքիա-Իրան հակասությունները: Եթե Իրանը փորձում էր շահագրգռել այդ երկրներին կրոնի՝ մասնադականության միջոցով, ապա Թուրքիան խոստանում էր այդ երկրներին շահավետ պայմաններով վարկեր: Եվ պետք է նշել, որ սկզբնական շրջանում Թուրքիան առավելության հասավ Իրանի նկատմամբ, քանզի հեախորհրդային հանրապետություններին տվյալ փառում անհրաժեշտ էին վարկեր, այլ ոչ թե կրոնական մղումներ: Այս ամենը վերաբերվում է բոլոր մասնադական հանրապետություններին ընդհանրապես և Ադրբեջանին՝ մասնավորապես: Հայաստանին առաջին հերթին այս իմաստով վերաբերվում են Թուրքիայի և Իրանի քաղաքականությունը հենց Ադրբեջանի նկատմամբ, քանզի վերջինիս հետ են կապված Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը և դրա հետ առնչվող Բարձի նավթի խնդիրը, մյուս կողմից Թուրքիայի պանթուրանական հույսերը, որոնք նա կապում էր Ադրբեջանի հետ, սրա հետ սերտորեն առնչվող Հայոց Յեղասպանության ճանաչման և այլ հիմնախնդիրները:

ՄԵԼԵՅՑՆ ԿԱՐԵՆԵ (ՉԵ)

ՆՏՔՈՐՎԿԵԳՈՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐՁԱՆԻ (V ԳՐԻՒ II ԿԵՍ - VI ԳՐԱ) ԳՎՎԱՆԱՐԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՁ

1. Քաղկեդոնի ժողովի որոշումները ընդհանուր քրիստոնեական եկեղեցին բաժանեցին երկու խոշոր հատվածների: Հեաքաղկեդոնական ժամանակաշրջանը իրենից ներկայացնում է շարունակական մի պայքար միարժակ և երկբնակ հատվածների միջև: Արևելքում ակնհայտ է հակաքաղկեդոնականների աճող գերակշռությունը: Միարժակները 451թ. հետո հաղթանակող էին արևելյան քրիստոնեության մեջ մի ամբողջ սերունդ:

2. Քաղկեդոնի ժողովում որպես «հավատա սահման» ընդունված Լեռնի Տոմարը և ժողովի դավանաբանական սահմանումը չընդունվեցին Արևելքի քրիստոնյաների կողմից: Վերջիններս գտնում էին, որ քաղկեդոնական վարդապետությունը չի համապատասխանում Եփեսոսի III տիեզերական ժողովի դավանաբանությունը և

հակադրվում է Ալեքսանդրյան դպրոցի ավանդույթին: Քաղկեդոնականության մերժումը առաջին հերթին աստվածաբանական մտորումների և դավանաբանական կողմնորոշման պրոցեսի հետևանք էր:

3. 482թ. բյուզանդական կայսր Ջենոնի (476-491թթ.) կողմից հրապարակվեց «Հենոտիկոնը»՝ «Միության գիրք»: Այն եթև անգամ հակաքաղկեդոնական ձեռնարկում չէր, ապա անշուշտ Քաղկեդոնի հեղինակությանը դիպչող ակա էր: Այն մի որոշում էր, որ իրապես վերականգնեց մալսաքաղկեդոնական քրիստոսաբանությունը, ինչպես որ շարադրված էր Եփեսոսի 431թ. ժողովում: «Հենոտիկոնը» պատճառ հանդիսացավ Կ.Պոլսի և Հռոմի պատրիարքական աթոռների միջև 482-518թթ. տևող խզման:

4. Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումները կայսրության քրիստոնյաներին պարտավորեցնելու քաղաքականությունը ավելի վճռականորեն, քան Հուստինոս I-ի (518-527թթ) գահակալության ժամանակ, իրագործում է Հուստինիանոս I-ը (527-565թթ.):

553թ. Կ.Պոլսի V տիեզերական ժողովում այսպես կոչված «Երեք գլուխները» (Թեոդորոս Մոպսուեստացու, Թեոդորետոս Կյուրոսցու և Իրաս Տդեսացու գրությունները) դատապարտելու ճանապարհով հնարավորություն ստեղծվեց միաբնականներին հաշտեցնել Քաղկեդոնի ժողովի հետ և քաղկեդոնականությունը ինչ-որ չափով կայունացավ կայսրության մեջ: Հռոմը, ինչպես որ ժամանակին ընդդիմացել էր «Հենոտիկոն»-ին, այժմ էլ հանդես եկավ «Երեք գլուխներին» դատապարտման դեմ, քանի որ բանադրել Անտիոքյան դպրոցի խոշորագույն մերկայացուցիչներին, նշանակում էր անտեսել Քաղկեդոնի որոշումները:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԳԷ)

Յ.Վ.ԳՅՈԹԵՒ «ՖԱՌՈՒՍՏԻ» ՀՆՅԵՐԵՆ ԹՒՐԳՄԱՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔՆՆԻ ԽԵՆԳԻՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ

Գյոթեի «Ֆաուստը» արդեն ավելի քան մեկ դար ընթերցվում, բեմադրվում և քարզմանվում է աարբեր ժողովրդների կողմից՝ առաջադրելով «Ֆաուստի» քարզմանությանը նվիրված մի շարք հարցեր, որոնցից կարևորագույնը Գյոթեի ստեղծագործության ինքնատիպ ոճի և ոճի մի ճիշտ փոխանցումն է: «Ֆաուստն» ունի ներքին ամուր կառուցվածք և շքեղ լեզվով պարտրված հարուստ բովանդակություն: Նրանում պահպանվել գեղանական տաղաչափության հայտնի կանոնները, այն գրված է վանկաշէշտային տաղաչափով:

«Ֆաուստը» հայերեն քարզմանվել է դեռևս անցած դարի վերջերին: «Ֆաուստի» հայերեն քարզմանությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանի.

1. Մինչև Պ.Միքայելյանի քարզմանությունը «Ֆաուստը» քարզմանվել է Մ.Նուրբայանի-1881թ., Թ.Թերեզյանի-1881թ., Տ.Լևոնյանի-1889թ., Տ.Արզուսի (հրատ. քվականը չի նշված), Գ.Բարխուդարյանցի-1902թ. և Կ.Յույուպեյանի-1946թ. կողմից: Այս քարզմանությունները արված են հատվածաբար (հիմնականում՝ միայն առաջին մասը), բացառությամբ Մ.Նուրբայանի քարզմանության, որը ֆրանսերենից քարզմանել է «Ֆաուստի» երկու մասերը: Բացի Բարխուդարյանցի և Յույուպեյանի, մնացած քարզմանությունները արձակ են և գեղարվեստական արժեք ունենալ չեն կարող: Նրանցում առկա են լեզվական սխալներ, ազատ քարզմանության հետևանքով առաջացած խմատային խեղաբյուրումներ և բացթողումներ:

2. 1963թ. Երևանում լույս տեսավ «Ֆաուստի» հայերեն երկհատորյակը՝ Պարույր Միրայեյանի քարգմանությամբ: Այս քարգմանությունը, ի տարբերություն նախորդների, իր մեջ ներառում է «Ֆաուստի» երկու մասերն էլ և քե՛ կառուցվածքով, քե՛ տաղաչափական և առանձնահատկություններով առավել մոտ է կանգնած բնագրին: Պ.Միրայեյանը «Ֆաուստը» հայերեն է քարգմանել վանկական համակարգով, այսինքն՝ հենվելով տողերում և կիսատողերում վանկերի թվի հավասարության վրա: Թարգմանիչը առավելապես օգտագործել է 10 վանկանի երկանդան տողը (5-5), 9 և 8 վանկանի երկանդան տողերը (5-4, 4-4), վերջիններս՝ հատկապես երկխոսությունների ժամանակ: Պ.Միրայեյանի այս տաղաչափի շնորհիվ հնարավոր է եղել հայերեն փոխանցել և Գյոթեի ինքնատիպ ոճը, և՛ ստեղծագործության ոլորտն ու ներքին կառուցվածքը:

«Ֆաուստի» բնագրի և հայերեն քարգմանությունների ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգման, որ վերջինիս վանկաշեշտային տաղաչափը լավագույնս փոխանցվում է հայերենի տաղաչափությանը առավել բնորոշ վանկականով (ինչն սովորի հաջողվել է Պ.Միրայեյանին):

ՄՈՎԱԲԱՅԱՆ ԲՐՏԱԿ (ՄԵ)

ՄԻՏԱՆՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՎՄԸ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՎ ԱՐՔԱՆԵՐԻ ՅԱՆԿՈՒՄ

1. Սկսած Մովսես Խորենացուց՝ հայ պատմագիրները ուշագրավ տեղեկություններ են հաղորդում Հայկազուն նահապետների ու արքաների մասին, որոնք ի մի են բերված Միրայեյ Չամչյանցի «Հայոց պատմության» էջերում: Պատմագրության մեջ տարբեր (նաև իրարամերժ) կարծիքներ են հայտնվել Հայկազուն տիրակալների ցանկի մասին: Հին արևելյան գրավոր աղբյուրների համադրությամբ կատարվող ուսումնասիրությունները գնալով ավելի են ամրապնդում տասնամյակներ առաջ հայտնված տեսակետը, համաձայն որի այդ ցանկում միավորվել են ոչ քե մեկ արքայատան, այլ տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշխարհում գոյատևած մի քանի պետական կազմավորումների տիրակալները:

2. Հայկից մինչև Անուշավան Մոսանվեր շարքի վերաբերյալ տեղեկությունների զուգադրումը հինարևելյան սեպագիր ու հիերոգլիֆ արձանագրությունների հաղորդումների հետ թույլ է տալիս նրանց թվագրել Զ. ա. XII-VIII դարերով: Պարետից սկսվում է նոր շարք, որը, քերես, ավարավել է Վաշտակով: Նման ենթադրության հիմք է տալիս այն հանգամանքը, որ Հայկ(ակ) անունը ցանկում կրկնվում է երեք անգամ, որոնցից առաջինն անկասկած, իսկ վերջինը մեծ հավանականությամբ եղել են նոր իշխանության հիմնադիրներ (այլ կերպ ասած՝ «Հայկ» անունը մեզանում վերածվել է հիմնադիր-տիրակալի պատվատիտղոսի):

3. Հայկազունների մասին Մ. Չամչյանցի հավաքած ու ներկայացրած տվյալները բաժանվում են երկու խմբի՝ պատմագրական տեղեկություններ և սեփական հուշվարկների հիմամբ կատարված համադրումներ: Մի կողմ թողնելով վերջինները, որոնք արված են XVIIIդ. ընդունված և ներկայումս շատ հարցերում խոցելի աստվածաշնչյան ժամանակագրության հետ հարմարեցվելով, անդրադառնանք առաջին խմբի սովյալներին:

ա) Շարքի երրորդ ներկայացուցիչ Ջավանի օրոք սկզբնավորվել է «Աթենացվոց միապետությունը»: Ավանդական տվյալների վերականգնումներով ներկայումս այն թվագրվում է Ք. ա. XVI-XIII դարերով:

բ) Ջավանին հաջորդող Փառնակը հարձակման է ենթարկվել Եգիպտոսի արքա Սեթոսի կողմից (վերջինս որդին էր Ամենոփի և հայրը Հոամսեի), կրել անհաջողություն, ապա վերականգնել իր իշխանությունը: Եգիպտոսի պատմությունից հայտնի են Ամենհոփեփ (Ամենոփ) անունով չորս փարավոններ, որոնք եղել են XVIII դինաստիայի ներկայացուցիչներ (Ք. ա. XVI-XIV դդ.): Սեթոսը Ք. ա. XIVդ. վերջին և XIII սկզբին իշխած Սեթի I-ը է (XIX դինաստիա), որը փորձել է Ամենհոփեփ IV-ի ժամանակ Եգիպտոսի կորցրած առաջավորասիական տիրույթները վերագրավել, իսկ նրա որդին Ռամզես II (Հոամսե) փարավոնն է, ում օրոք Եգիպտոսը հասավ մեծ հզորության:

գ) Փառնակի հաջորդ Սուրի ժամանակակիցն է Հեսու Նավյան՝ Մովսես մարգարեի հաջորդը: Աստվածաշնչի ժամանակագրության համաձայն նա իշխել է Ք. ա. XVդ., թեպետ ժամանակակից արևելագիտության մեջ խորայեցիցիների՝ Քանաանում (Ավետյաց եկերում) հայտնվելու թվագրման համար ավելի հավանական են համարում Ք. ա. XIV-XII դդ.:

4. Ժամանակագրական սահմանագծմանը նպաստող նշված փաստերի քննությունը քույլ է տալիս Պարեա-Վաշտակ շարքը թվագրել Ք. ա. XVI-XIIIդարերով, որը ճշգրտորեն համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի հարավում և Միջագետքի հյուսիսում բարձրացած Միտաննի թագավորության ժամանակաշրջանին: Ընդ որում, նշված շրջանը հնագույն պատմության միակ ժամանակահատվածն է, երբ եգիպտական զորքերը ուղղվել են հայաստանյան որևէ պետության դեմ, և դա եղել է Միտաննին: Պատմաժամանակագրական այս համապատասխանություններին կարելի էր մեծ կարևորություն չտալ, եթե չլինեք շատ ուշագրավ մեկ այլ հանգամանք: Միտաննիի առաջին հայտնի արքան Շուտանան է, որի հզորություն մասին տեղեկություններ չունենք: Նրան հաջորդել է Պարաստատունան՝ առաջինը Միտաննիում՝ հայտնի «հզոր արքա» տիտղոսով, ինչը ցույց է տալիս, որ տերությունը հզորությունը սկսվում է նրանով: Միտաննիի վերջին հզոր տիրակալը՝ հայտնի «մեծ արքա» տիտղոսով, որի գոհվելը ասուրա - իսթական արքայական զրագրության մեջ համագործում էր պետության անկման հետ, եղել է Վասաշատտան: Միտաննիի առաջին և վերջին հզոր արքաների անունները նույնանալու չափ մնան են մեզ հետաքրքրող շարքի համապատասխան տիրակալների անուններին (Պարաստատունա-Պարեա, Վասաշատտա-Վաշտակ), ինչը վերշարադրյալ փաստերի հետ մեկ համակարգում դիտելիս դժվար է քաջատրել պատահական մանուշյամբ: Նշված փաստարկներին կարելի է ավելացնել ևս մի քանի համադրումներ՝ տարբեր աստիճանի հավանականությամբ: Հետաքրքրական է նաև, որ Մ. Չամչյանցի բերած գահաժամկետները (որոնց սկզբնաղբյուրը մեզ մնում է անհայտ) գումարելով՝ Պարեա - Վաշտակ շարքի իշխանության տևողությունը ստանում ենք 281 տարի, որը մտավոր չափով համընկնում է Միտաննիի գոյության ժամանակաշրջանին:

5. Նշվածների կողքին առկա են նաև անհամապատասխանություններ: Մասնավորապես Պարեա - Վաշտակ շարքն ունի յոթ ներկայացուցիչ, իսկ Միտաննիի մեզ հայտնի արքաների թիվը տասնչորս է: Գուցե՞ այստեղ գործ ունենք հին մատենագրության սկզբունքներից մեկի՝ հետ՝ «հներից բաց բողնել անձան մ վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այլ հիշել միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիներին»: Քանի որ հին աշխարհում շատ տարածված էր հատուկ անունների թարգման-

նորոյունը, ուսումնասիրութեան կարտ է մնում երկու ցանկերի անուններէ իմաստային համեմատութեանը:

Եթէ առաջիկա ուսումնասիրութեանները հաստատեն մեր առաջ քաշած վարկածը, կտանանք հետաքրքիր պատկեր: Կարգովի, որ հնդարիական դիանոստիա ունեցող Միտաննիի արքաներին հայոց ավանդական պատմագրութեանը համարել է Հայկականներ, որոնք ուղիղ գծով չեն սերել յոյցագուն Հայկից, քայց եղել են նրա ցեղակաւորութեանց և բռնի ուժով տիրել Հայաստանին: Դա կարող է նոր լույս սփռել ինչպէս հայոց պատմագրութեան (հատկապէս խորեմացիագիտութեան), այնպէս էլ հինարեւելագիտութեան մի շարք խնդիրների վրա:

ՇԱԳՈՅԱՆ ԳՈՅԱՆԵ (ՀՈՒ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՄԻ ՄՈԳԱԿԱՆ ԾԵՍԻ ԾԻՍԱ- ԱՌԱՍԳԵԼԱՐԱՆԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՓՈՐՁ

Ավանդական և ժամանակակից հայոց հարսանիքում հարսի ծնկներին տղա երեխա են նստեցնում, որպէսզի նրա առաջնեկը ևս տղա ծնվի: Այս ծեսի ժողովրդական մեկնարանութեանը փաստորեն համզում է մի մոգական բանաձևի, որը պիտի ապահովի սերնդաճութեանը, ինչը հայոց հարսանեկան բազմաթիվ ծեսերի բովանդակութեանը կազմող պաղարբերութեան ընդհանուր բնայի մի մասն է:

Մակայն այս կարգի ծեսերի մի քանի տարբերակներ համադրելով՝ պարզեցինք, որ նման բանաձևը բավականին արխայիկ է և հարսանեկան ծիսաշարքի մի կարևոր ծեսի ընդամենը վերջին մասն է: Այդ ծեսի ամբողջական տարբերակը ունի հետևյալ տեսքը. փեսայի տանը հարսի համար նախատեսված բ ա ղ ի ն նստում էր մի տղա երեխա: Որպէսզի երեխան իր տեղը զիջեր հարսին, քավորը կամ փեսան նրան փող էր տալիս, որից հետո քարծին մտնեմուն էր հարսը, քայց չէր նստում, մինչև որ փեսայի հայրը կամ մայրը նրան չտային կամ չխտատանային որևէ ուկեր: Եվ միայն այս ամենից հետո էին նրա ծնկներին երեխա նստեցնում:

Չնայած այս ծեսի բազմաթիվ տարբերակների առկայութեանը, նրա ինվարիանտային հիմքը կազմում են հետևյալ երեք բնաները.

ա) տեղի գնում (առասպելաբանական այլոմտովին է պայքարը),

բ) հարսին քարծին նստեցնելը,

գ) հարսի ծնկներին երեխա նստեցնելը:

Ա. Բարձր զննելու ծեսը (*բարձր բունելը*) հիշեցնում է հարսի և փեսայի կողմերի հակամարտութեանն առավել շեշտող՝ հարսին իր տանից դուրս չթողնելու ծեսը (*դուրս բունելը*): Այսպիսով, այստեղ առկա է ծիսական պայքարի բնման, որը հանգեցնում է ճանապարհի կամ *տեղի* ազատագրման բնային: Ընդ որում, այդ տեղը՝ բարձր, ինչպէս կտեսնենք ստորև, կարող է համադրվել գոհարանի հետ:

Բ. Բարձր, որի վրա նստելու էր հարսը, բացի նստելու հարմարանք լինելուց, նաև պատվի նշան է և ունի որոշակի առնչութեան գոհարանի հետ: Հայերեն *բարձր* բառը, լինելով իրանական փոխառութեան, ծագել է հնդեվրոպական *bhelgʰ - արմատից, որից նաև առաջացել է հնդկական *bahis* -ը՝ ծղոտն բարձիկ, որի վրա գոհարբութեան ժամանակ նստում էին աստվածները և գոհարբողները (Տայրոզ, 1974): *Bahis*-ի, ինչպէս նաև հարսանեկան բարձի վրա նստելը կապված է պաղարբերութեան, ծննդարբութեան գաղափարի հետ և համապատասխանում է հարսին՝ ֆալոս ներկայացնող քարի վրա նստեցնելու ծեսին: Ժամանակակից պատկառութեան որոշ նկարագրու-

թյուններում հանդիպող բարձր՝ իբրև ծխական առարկա, ըստ երևույթին, քննարկվող ավանդական ծեսի արձագանքն է:

Գ. Գլխարկելով ծեսը նշված ենթատեսքատում՝ նրա վերջին մասը՝ հարսի ծնկներին նոքածին աղա նստեցնելը, դառնում է ծխական մի ընդհանուր դրամայի եզրափակիչ տեսարան, ըստ որի հարսն ինքն է ծնունդ աչդ երեխային և սրանով կանխորոշում նրա իրական, ոչ սիմվոլիկ ծնունդը /հմմտ. հ-ե. ծունկ և տոհմ արմատների ստուգաբանական կապը (* g'ea-):

Այսպիսով, հարսանիքում պահպանվել է ծեսի միայն ընտանեկան առումը՝ ժառանգի ծնունդը, մինչդեռ ընդհանուր ծեսն արծարծվում է աիեզրաստեղծ գոնաբերության արխայիկ ծեսում:

ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐՉԱՆ (ԱԲ)

DEWREŠ E'RD

(ԵԶԳԻԱԿԱՆ «ՆՈՂԻ ՍՈՒՐՔԸ»)

Ցանկացած ժողովրդի հավատալիքներում անդրշիրիմյան կյանքի մասին պատկերացումները ունեն առավել ներքին բնույթ: Սա ավելի քան սկնեհայտ է եզդիների պարագայում: Եզդիականության մեջ հանդերձյալ կյանքի մասին պատկերացումները, այս ոլորտին առնչվող ծխական-կրոնական արարողակարգը և հավատալիքները՝ պայմանավորված վերը նշված ներփակությամբ, հետազոտողի համար առավել դժվարամատչելի ոլորտներից են:

Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ եզդիականությունը, գուրկ լինելով եկեղեցու, որպես կարգավորիչ ինստիտուտի գոյությունից, թե՛ հանդերձյալ կյանքին առնչվող, և թե՛ այլ կրոնական ծխական արարողակարգերի դեպքում տեղ է բողոնում զանազան՝ հաճախ թյուր մեկանաբանությունների:

Մինչև այժմ հետազոտողների հատուկ ուշադրությանը չի արժանացել մի այնպիսի կարևոր «եզդիական սուրբ», ինչպիսին dewreš e'rd – ն է:

Այս աստվածություն-սրբի անունը հանդիպում է եզդիական քաղման ծեսի ավարտին հոգեորակների՝ շեյխի կամ փիրի կողմից գերեզմանի վրա կարդացվող մի հատուկ աղոթքում, որը կոչվում է «*հողի սրբի*» աղոթք (du'äyē dewreš e'rd) կամ *հողին հանձնման աղոթք* (du'äyē t'asmilē e'rdē): Նշված աղոթքը եզդի շեյխը կամ փիրը սլետք է արտասանի կատարելալ միայնության մեջ, նույնիսկ հանգուցյալի ամենամտերին հարազատները իրավունք չունեն լսելու այն:

Զեկուցման մեջ վերոհիշյալ աղոթքի մանրամասն վերլուծության միջոցով փորձ է արվում ճշգրտելու հանդերձյալ կյանքում «*հողի սրբի*» ունեցած գործառությունները, եզդիական հավատալիքներում վերջինիս ունեցած տեղը ու նշանակությունը:

**ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻՅ ԱՌԱՋԱՅԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Հայերենում խիստ առատ են սկզբնաձևի համեմատ հնչյունական տարբերակների ունեցող տեղանունները: Այս երևույթի պատճառ են լինում բարբառների ազդեցությունը, արևելահայերեն-արևմտահայերեն հնչյունական տարբերությունները, գրչագրական տարբերակները, որը հաճախ նույնպես հանգեցնում է նախաձևից տարբերվող տեղանվան ի հայտ գալուն:

Հնչյունական տարբերակները մի շարք դեպքերում չեն հանգեցրել ինքնուրույն տեղանվան առաջացմանը, օրինակ՝ Երասխ/Արաքս/Արազ/Արաքսես, Կորքեր/Կռաուր/Քերուր, Երզնկա/Արզանցան/Արզնկա/ Եզնկա/ Երջինա և այլն, բաղադրյալ Թեղուտ/Դեղուտ/Տեղուտ/ Թիղուտ տարբերակները: Նշված տարբերակները միևնույն օբյեկտն են անվանում:

Իսկ հաճախ հնչյունական տարբերակները միայնցից անկախ բնակավայրեր և այլ օբյեկտներ են անվանել, օրինակ՝ Առինջ/ Առիճ/ Առինճ/Հառինճ/Արինջ/Արուն/ Արենջ, Արաքս (գետ) /Երասխ (երկաթաղային կայարան և ավան ՀՀ-ում) /Արազ (գյուղ Վանի նահանգում), Դարբազ /Դարպաս/ Դարբաս/ Դարաբաս, Դեղ/ Դեխ/ Դեհ՝ (զուցե մակ՝ Տեղ > ղեղ), Դիս (>ից) /Դյուց, Սորք/Սոր/Չոր/Շավդեք (հին գավառանուն), Առնափոս / Էռնատա և այլն: Բաղադրյալ կազմությամբ՝ Եղեգի/Եղիգի, Երերույր/ Երերուք, Էրիշատ /Երիշատ, Ավանիկ / Ավնիկ և այլն:

Տեղանունների նման հնչյունափոխումների մեծ մասը, բարբառներից կամ խոսակցական լեզվից բացի, կատարվել են այլ լեզուների (լուսնաբեն, ասորերեն, պարսկերեն, արաբերեն) միջամտությամբ: Հայոց տեղանուններում հատկապես մեծ է բուրբերենի ազդեցությունը: Ըստ Հրայրյա Աճառյանի՝ «Թուրքերը, տիրելով Հայաստանին, չփոխեցին Ակն, Վան, Չմշկամազ, Երզնկա, Բարեղ, Կումայրի, Կարս, Չազաձոր և այլ անունները, այլ բուրբերենի ծայնական օրենքների համաձայն դարձրին Էգին, Վան, Չիմիշգեզեք, Էրզինջան, Բայրուքք, Գյումրի, Դարս, Չանգեզուր և այլն» (Հրայրյա Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 188): Նույնպես և ռուսերենում՝ Շուշա, Էշմիաղգին, Էրիվան և այլն:

Տեղանունների «բուրբացման» այս երևույթը տարածված էր դեռևս միջին հայերենից: Նախնական դիտարկումների վրա հենվելով՝ կարելի է նշել, որ հայոց տեղանունների (ոչ միայն արմատական) բուրբացման երեք հիմնական դեպքեր էին լինում:

- 1) Հնչյունական. Արազած-Արագյազ, Դարանակ-Դարա, Ողջի- Օղջողի, Բող (բերդ) - Բուղակալա, Կող - Գյոլե, Կապաղակ - Կարալա և այլն:
- 2) Իմաստային. Ազնվածոր - Գյոզաղարա, Ծաղկուտ-Գյուլիջա, Արեզունի-Գյունե, Պաղաղբյուր - Սովուղբյուր, Դարբնիկ- Դեմուրչի, ճերմակավան- Արքիխաս, Կարճիր փորակ-Ղբզըլ ցյաղուկ, Վարդանաբզ (գետ)-Ղբլխ բուրաղ չայ, Չորագյուղ - Դարաբենդ (Տերերենա) և այլն:
- 3) Իմաստային-հնչյունական. Աղբերք-Աղբուրաղ, Չարենավան-Չարաֆխանե, Կորո Չոր (գետ) - Էյոռ սու, Քաղերդ - Աղաշ և այլն:

Այս օրինաչափությունների վերհանումը հնարավորություն է տալիս պարզել հայերեն-բուրբերեն լեզվական մի շարք առնչություններ, դրանց միջոցով՝ հայ ժողովրդի պատմության այս շրջանին վերաբերող իրողություններ:

ՋԻՈՒ ԿԵՐՊԱՐԸ «ՔՅՈՌ-ՕԳԼԻ» ԷՂՍՈՒՄ

«Քյոռոզլի» քյուրբակյան էպոսը ուշ միջնադարի (XVIIդ.) ստեղծագործություն լինելով համդերձ՝ իր զանազան ազգային տարբերակներում պարսիակում է բազմաթիվ արխաիկ շերտեր, առասպելաբանական հնագույն տարրեր: Դրանցից առավել ցայտուն է արտասխայոված ձիու պաշտամունքը:

Չիու պաշտամունքին առնչվող տարրերը որպես հիմք ընդունելով՝ դեռևս Ժ.Դյումենզիլն է նշել տարբեր վիպական ստեղծագործությունների համանմանությունների առկայությունը (ընդհուպ մաս Հերոդոտոսի կողմից ավանդված սկյութական առասպելների միջև): Էպոսի բոլոր տարբերակներում առկա Քյոռոզլու ձիու (Դըռաթ) կերպարը առասպելական բնորոշ գունավորում է ստացել՝ կախված անդակալան միջավայրում արդեն իսկ ձևավորված վիպական ավանդույթից:

Արևելյան (միջինասիական) տարբերակներում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ձիու տոտեմական պաշտամունքի վերապրուկները: Չիու կերպարը սերտորեն միախյուսված է ձիերի մասին ստեղծված «ասպի աղլըդոր» (խնաստուն ձի), «թուլիար», «բափար» նախնական ավանդազրույցներին:

Առավել հետաքրքրական են պատմական միջուկը պահպանած արևմտյան խմբի տարբերակներում (թուրքական, աղբրեջանական, հայկական և այլն) առկա առասպելական տարրերը: Քյոռոզլու մարտածին ունի ջրային (ծովային) ծագում, օժտված է հրաշք հատկություններով, քևավոր է, ունի բանականություն, օգնում է տիրոջը հարձակման և պաշտպանության ժամանակ, հսկում նրա դյուցազնական բունը, զգում քննամու մոտենալը և այլն:

Թյուրքական տարբերակներում ձիու հետ կապված բազմաթիվ դրվագներ առնչվում են օղուզական հերոսական էպոսին: Հայկական տարբերակներում իրենց հերթին առկա են մի շարք համանմանություններ՝ կապված, մասնավորապես, «Մասնա ծոեր» էպոսի և այլ բանահյուսական ստեղծագործությունների հետ: Վերը նշվածն առավել ցայտուն է արտացոլված Վանի և Մոկսի բարբառներով զբաղված տարբերակներով: Ընդամեն, իրեղեն ձիերի և մատակների զուգավորումից ծնված հրաշք ձիերի մասին հեքիանոսական հավատալիքը հայերի շրջանում հայտնի է եղել դեռևս Եգնիկ Կողբացու (Vդ.) ժամանակներից:

Ըստ երևույթին Քյոռոզլու նժույզի Դըռաթ («գորշ ձի») անունը տարածված է եղել հայերի շրջանում XVIIդ., ինչի մասին վկայում է Ջաբարիա Քանաքեղցին: Սույն փաստն ինքնին խոսում է նշված ժամանակաշրջանում հենց Քյոռոզլու սարերի արդեն իսկ տարածված և ձևավորված լինելու օգտին:

ԱՐԱՐԱՎՆԸ ՓՈՒՍՈՒՄԻՅՈՒՆՆԵՐԸ ՏՈՒՐՈՒՑԵՐԱՆԻ, ԵՐԱՎԻ ԵՎ ԼՈՌՎԱ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Հայերենը սկիզբ առնելով հնդեվրոպական հիմք լեզվից և անցնելով զարգացման երկար ճանապարհ՝ զերծ չի մնացել օտար ազդեցություններից ու տարբեր ժամանակներում զանազան լեզուներից բազմաբանակ բառեր է փոխառել, որոնք և նրա բառապաշարի մի սովոր մասն են կազմում:

Զգալի է եղել նաև արարերենի ազդեցությունը հայերենի վրա: Չունենալով VII-X դդ-ում ստեղծված և արձանագրված ժողովրդական որևէ ստեղծագործություն, չենք կարող ասել, թե արարերենը որքանով է ազդել այդ շրջանի խոսակցական հայերենի վրա: Սակայն ակնհայտ է, որ գիտական աշխատություններում (բժշկա-գիտական) դրանց թիվը հասնում է հարյուրների:

Մեր նպատակն է ցույց տալ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի բարբառներում եղած արարերեն բառերի տեղն ու բանակը, գործածման որոտները, կրած իմաստային, հնչյունական, բառակազմական և քերականական փոփոխությունները:

Այս բեմային մանրամասն անդրադարձել է Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ: Մենք ջանացել ենք ավելի համազանցակցից քննության տանել հայերենում առկա արարերեն բառերը և նրանց կրած զանազան փոփոխությունները, որոնք չեն եղել Աճառյանի ուսումնասիրության բուն նպատակը:

Հայերենի շուրջ 60 բարբառներում էլ, անշուշտ, առկա է արարերենի ազդեցությունը, սակայն մենք ուսումնասիրել ենք միայն Տուրքերանի, Շիրակի և Լոռվա հեթիաքները, որոնք ասացողները պատմել են հարազատ բարբառներով:

Նշենք, որ գտել և դուրս ենք գրել հայկական ժողովրդական հեթիաքներից շուրջ 300 արարերեն բառ, որոնցից ընդամենը 32-ն են նշված Աճառյանի բերած ցանկում: Պետք է ենթադրել, որ մնացած բառերը հայերենին են անցել միջնորդ լեզուներից՝ բուրբերենից և պարսկերենից, բանգի լինելով «Լուրանի» և մահմեդական աշխարհի մշակույթի լեզու՝ արարերենը առատաբովս աղբյուր է եղել հարակից լեզուների համար:

ՍԱՀՈՑՁԱՆ ԼՈՒՄԲԵՆ, ՍԱՏԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԳՐ (ԵՉՏ)

ԺԱՄԱՆԱԿԱԿՅԻՑ ԹՈՒՐԵՐԵՆԻ ԳԵՐԲԱՅՆԵՐԻ ԵՎ ՆԲԱՆՑ ԳԱՍԱՎԱՆԳՄԱՆ ՄԻ ԲԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Թուրքերենում դերբայներն իրենց կազմությամբ, ձևախմբաբանությամբ և շարահյուսական դրսևորումներով բազմազան են և նախադասության մեջ հանդես են գալիս խոսքիմաստային տարբեր փոխանցումներով: Թուրքերենի դերբայների քննության մասին են եկել ինչպես բուրբ գիտնականները (Nuret'in Koc, Tahir Nejat Gencan, Muharrem Ergin), այնպես էլ՝ խորհրդային (Կոնոնով, Ալյարով և ուրիշներ):

2. Հայ ուսանողին բուրբերենի դերբայների ուսուցումը դյուրացնելու համար անհրաժեշտ է վերլուծություններն ու բացատրությունները տալ հայերենի դերբայների կամ այլ համապատասխան ձևերի համեմատական քննությամբ, որի համար հիմք են ծառայում Գ.Չախուրյանի, Ա. Մրբախանյանի, Է. Աղայանի և այլոց աշխատություններում տեղ գտած սահմանումներն ու մեկնությունները:

3. Ժամանակակից բուրբերենում դերբայները տարբերակվում են երեք խմբի՝ 1) *անորոշ* (Eylemliler կամ Ad-Eylem), 2) *ածական* դերբայներ (Ortaçlar կամ Sfiat- Eylem), 3) *մակրայական* դերբայներ (Ulaçlar կամ Bağ - Eylem):

Անորոշ դերբայները, որոնք ունեն բայանվաճական գործառույթ, կազմվում են *-mak, -mek, -ma, -me, -maklık, -meklik, -ւչ, -իչ, -ւս, -նչ* վերջածանցներով:

4. Ածական դերբայները կատարում են գոյականի լրացման գործառույթ: Այս դերբայները արտահայտում են *ժամանակի և իմաստի* հասկացություն.

ա) ժամանակի իմաստ արտահայտող դերբայները կազմվում են՝ քայարմատին ավերացնելով սահմանական եղանակի *ընդարձակ (ներկա կամ ներկա սպասել) ժամանակի /geniş zaman/ -r (-ar, -er, -ür, -ir, -ur, -ür)*, սալստնի ժամանակի */gelecek zaman/ - acak, -ecek*, վաղակատար ժամանակի */Belirsiz geçmiş zaman/ -miş, -miş, -muş, -müş* եղանակիչները և *-ast, -esi, -ca, ce, -dik, -dik, -duk, -duk / -tik, -tik, tuk, tuk/* դերբայակերտ ածանցները: Ածականական դերբայները, որոնք առկա են հայոց լեզվում, մերձենում են հայերենի ենթակայական և հարակատար դերբայներին, ինչպես *olur şey - լինող բան, լինելու բան, güller yitir - ժպտացող դեմք, gelecek yıl - եկող տարի, solmuş çiçek - քառամած ծաղիկ* և այլն:

բ) Վիճակի իմաստ արտահայտող դերբայները կազմվում են *-an, -en, և -maz, -mez* ածանցներով, օրինակ՝ *çikmaz sokak-փակուղի, kirlenmez cam - չկոտրվող ապակի, bitmez der - անվերջ (հավերժական) վիշտ* և այլն:

5. Առանձին հետաքրքրություն են ներկայացնում քայի լրացումների (խնդիրներ և պարագաներ) գործառություն կատարող մակրայական դերբայները: Թուրքերենը ունի հարուստ մակրայական դերբայների համակարգ, որոնք հանդես են գալիս ձևաբանական և շարահյուսական բազմազան ներծավարումներով: Այստեղից էլ դրանց յուրացումը առանձնակի դժվարություն կարող է հարուցել հայ ուսանողին: Համաձայն ժամանակակից բուրք քերականագետ Նուրեթթին Քուչի կազմած աղյուսակի՝ մակրայական դերբայների թիվը հասնում է 32-ի, որոնք ներկայացված են իրենց համապատասխան դերբայակերտ, հորվական ածանցներով և կապական բառերով:

Դերբայների ուսուցումը հայ ուսանողին մատչելի դարձնելու նպատակով՝ արվում են նաև հայերենում առկա դրանց համապատասխան համարժեքներն ու ձևերը: Մակրայական դերբայները իրենց իմաստաշարահյուսական գործառությամբ նույնանում են հայերենի անորոշ (հորվված՝ սեռական, տրական, գործիական), ինչպես նաև համընթացական (կիս, ալիս) դերբայներին, ինչպես՝ *yaparak - անելիս // yapınca - անելիս, yaptığı zaman - անելու ժամանակ, yaptığı halde - անելու դեպքում, yapmadan - անելուն պես, yapır - անելով* և այլն:

5.1. Միաժամանակ մակրայական դերբայները ժամանակակից բուրքերենում ունեն երկու կարևոր նշանակություն.

ա) *օգտագործվում են բարդ ստորադասական նախադասություն կազմելու համար.*

բ) *ունենալով պարագայական գործառություն՝ արտահայտում են ստորոգյալի եղելություն, ձև, առկա և ժամանակ:*

6. Այս գեկուցման մեջ ներկայացված դերբայական և մակրայական ձևերն ընտրված են առավելապես ժամանակակից բուրքական գեկարվեստական արձակից (Յաշար Քեմալ, Ազիս Ներսին, Ֆարիթ Բայրտուր, Մամիմ Քոջալյոզ և ուրիշներ):

ՍՐԿԱՍՈՒ ԱՐՏԱԳ (ԱՐ)

**ՏՐԿԱՏ I ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ՀԵՏ ԿՆՊՎԱԾ ՉԱՏՄԱԳՒՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՅԵՐԻ ԸՈՒՐՋ**

Պատմագիտության մեջ Տրդատ I-ի վերաբերյալ առկա են բազմաթիվ խնդիրներ: Սույն աշխատանքում քննարկվելիք հարցերը հետևյալն են. ա) արդյո՞ք հայ

Տրդատ I-ի գահակալում ժամանակահատվածի վերաբերյալ գտնում ենք, որ արքան Արուաշես II-ին նույնանալով, իշխել է 41 տարի՝ 66-107թթ. ընթացքում: Յավոք, 77-ից մինչև Աշխադարի գահակալումը հունա-հռոմեական աղբյուրները լուծ են և այս սրբազայում անփոխարինելի են Խորենացու վկայությունները, որոնք, սակայն, անուշադրության են մատնվել:

Աղբյուրները և միջազգային հարաբերությունների զարգացումները ցուցանում են, որ 91(96)-107թթ. ընթացքում հայ-պարթևական զորքերը արշավել են Եդեսիա, վերացրել Օսրոյենեի թագավորությունը, կազմակերպել հակահռոմեական հզոր դաշինք՝ նաև հեռավոր Դակիայի, Ապառած Արարայի երկու թագավորությունների՝ Նաբատեական Պետրայի և հրեական Կեսարի-Պանեղիսի ընդգրկումով:

Տրայանոսը, ի պատասխան այդ դաշինքի, 106թ. կայսրությանն է կցում Դակիան և 106-107թթ., արշավելով Աբևեք, Ապառած Արարիան վերածում է պրովինցիայի, իսկ Պաղեստինի հյուսիս-արևելյան շրջանները միացնում Ասորիքին: Չրավարարվելով դրանով, Տրայանոսը անցնում է Եփրատը, վերականգնում Օսրոյենեի թագավորությունը: Հայոց զորքերը, Արուաշես-Տրդատի գլխավորությամբ, ընդունելով կայսեր գերիշխանությունը, վերադառնում են Հայաստան: Ահա այդ ժամանակ էլ Տրդատ արքան, 76-81 տարեկան հասակում, պետք է որ վախճանված լինի:

ՄԱՏԱՐՅԱՆ ԱՆԵՔՍԱՆԳԲ, ՄԵՐԱՔՅԱՆ ԲՈՒՐԵՆ (ԵՉՏ)

ԱԳՈՔԻ ԵՎ ՉԻՔԻ ՓՈՆԵԿՎԱԿՅՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՆՆ ԱՐԱՔԻ «ՏՈՒՍՈՒՍԱԼ-ՆԻՔՄ»-ՈՒՄ

1. Մուֆիական գրականության պատմության ուսումնասիրության համար քացառիկ արժեք ունի մեծ շեյխ Մուհիդդին Իբն Աբսիի (1165-1240) (بن عربى الشيخ الاكبر محين الدين فصرص الحكم) «Տուտուս-ալ-Հիրամ» («Իմաստության գեմարարներ») (فصوص الحكم) երկը, որի արաբերեն քննական հրատարակությունը լույս է տեսել Կահիրեում ու Բեյրութում՝ աշխատասիրությամբ փիլ. դոկտոր Աբու-ալ-Ալս Աֆիֆիի (ابو العلا عفيفي) (Քեմբրիջի համալսարան):

2. Չիրի և աղոթքի (تكر-صلا) թագմարար փոխկապակցվածության, ինչպես նաև սուֆիական զարգացման աստվածաբանության ու դոգմատիկ-աղոթախո խլամի «աղասպ-տացման գործընթացի» հիմնահարցերի քննության անսանկյունից կարևորվում է մասնավորապես միստիկական աստվածաբանության վերոհիշյալ կոթողի՝ ստորև բնագրից թարգմանարար ներկայացվող հատվածը, որտեղ Իբն Աբսիին համղես է եկել Դուրանի սուրաթը կարդալու անհրաժեշտության ուրույն ջատագովությանը: Հատվածի պատմաբանասիրական վերլուծության համեսա փորձ է ներկայացվող գեկուցումը:

3. (Բնագիրը) Աղոթքը ինձ համար դարձավ աչքի լույս, քանզի այն վկայություն է (ու տեսիրք (مشاهدة)), այսպես է, քանզի այն գաղտնի գրույց է Ալլահի ու նրա ստրուկի միջև. ինչպես ասել է «Հիշեք Ինձ, և Ես կիշխեմ ձեզ»: Եվ այն (աղոթքը) երկրպագություն (պաշտամունք (عبادة)) է, որը երկու կեսով բաժանված է Ալլահի ու: Մրա ստրուկի միջև: Նրա (աղոթքի) կեսը Ալլահինն է, կեսը՝ ստրուկինը, ինչպես ասված է ճշմարիտ լուրում, քն Բարձրալը՝ Ալլահը ասել է. «Գաժանեցի աղոթքը երկու մասի Իմ և Իմ ստրուկի միջև: (աղոթքի) կեսը Իմն է, և կեսը Իմ ստրուկինը, և Իմ ստրուկին (կարգի) այն, ինչ խնդրեց»: Ասում է ստրուկը. « Հանում քարեգութ-քարեսիրտ Ալլահի...»: Ալլահը ասում է. « Իմ

սարուկը հիշեց ինձ»: Սարուկը ասում է. «Փառք Ալլահին՝ երկու աշխարհների Աստծուն...»: Ասում է Ալլահը. «Իմ սարուկը փառաբանեց ինձ»: Ասում է սարուկը. «Բարեգութին, Բարեխիտին (փառք)»: Ալլահը ասում է. «Իմ սարուկը բարձրացրեց սա ինձ գովքը»: Սարուկը ասում է. «Ահեղ դատարանի օրվա Տիրակալին...»: Ալլահը ասում է. «Փառաբանեց – լիազորեց Ինձ Իմ սարուկը»: Եվ այս կեսը ամբողջությամբ բարձրյալինն է: Այնուհետև սարուկը ասում է. «Քեզ ենք երկրպագում և քեզից ենք օգնություն հայցում...»: Ալլահը ասում է. «Մա Իմ ու Իմ սարուկի միջև է... Իմ սարուկին՝ (կարվի) այն, ինչ խնդրեց»... Սարուկը ասում է. «Տար մեզ ուղիղ ճանապարհով, նրանց ճանապարհով, ում գրացիր, ում վրա չես բարկանում, ով չի գործում մեղք»: Ալլահը ասում է. «Մա՛ Իմ սարուկին, և Իմ սարուկին՝ (կարվի) այն, ինչ խնդրեց»: Եվ սա (այն կեսը) սարուկինն է, ինչպես պաշտինը՝ Բարձրյալինը: Այստեղից բխում է «Փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն» կարդալու աներաժեշտությունը, և ով այն չի կարդում, չի կատարում Աստծո՞ւ և Նրա սարուկի միջև կիսված աղոթքը: Իսկ այն զաղոտի գրույց է, որ (նշանակում է) հիշել (حِذْر), իսկ ով հիշում է Աստծուն, հայտնվում է Աստծո՞ւ մոտ և Աստված՝ (գտնվում է) նրա մոտ, քանզի ճշմարտությունը Աստվածային լուրի մեջ է, ըստ որի Բարձրյալը ասել է. «Ես ինձ հիշողի հետ եմ»: Իսկ լինելով նրա հետ, ում հիշում է, կտեսնի նրան, ով իր հետ է, եթե տեսողություն ունի. դա վկայություն է ու տեսիլք»:

ՎԱՐՎԱՆՅԱՆ ԳՈՏՈՐ (ԵՏԱՆՆ)

ՀՐԱՃԱՋՅԱՆԸ՝ ՊԱՐՍԿԱՍՏՅԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ

1. Հայ մեծամուն լեզվարան Հր.Աճառյանը այն հանրագիտակ գիտնականներից է, որոնց հետաքրքրությունների ծիրը գիտության մեկ բնագավառով չի պարփակվում: Աճառյանի ժառանգությունը ընդգրկում է հայագիտության համար բոլոր ասպարեզները:

Մի ուրույն գիտական ուսումնասիրության նյութ է հենց մեծ գիտնականի «Կյանքիս հուշերից» ինքնակենսագրական գիրքը, որից որոնող միտքը կարող է գիտության համար բազմաթիվ արժեքավոր փաստեր բաղել: Շրջագայելով Պարսկաստանի մի շարք գավառներում ու քաղաքներում (Էնզելի, Ռաշտ, Ղազվին և այլն), 6 տարի ապրելով Թավրիզում և մեկ տարի՝ Թեհրանում, Աճառյանը իր զբոսում պարսկահայ զաղոթաշարիի և նրա երևելիների մասին խիստ ուշագրավ հուշեր ու տեղեկություններ է հաղորդում: Դրանք նա օգտագործել է նաև իր «Հայոց զաղոթների պատմություն» ցարդ անոթյալ աշխատության մեջ:

2. Որտեղ էլ, որ Աճառյանը եղել է կամ ապրել (Թուրքիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Վրաստան, Ալբերջան, Պարսկաստան), ուսումնասիրել է նաև տեղական ժողովրդների նիստուկացը, սովորույթները, կրոնական հավատալիքները. օրինակ, Ստամբուլում այցելել է մեկիներին ու Ռուֆայի դերվիշներին, Թավրիզում ծանոթացել է քումարիների այցելել և մեկնելին, Բարփում մասնակցել է բահայիների հավաքներին, այնուհետև՝ 1919թ. Թեհրանում մի ամբիկացի բժշկուհու միջոցով անգլերեն բարձրագույնությամբ կարդացել է Բահաուլլահի «Քիթաբ-ի-արդաս»-ը, որը բահայիների սրբազան գիրքն է: Փաստորեն, հայ իրականության մեջ, Առաքելից հետո Աճառյանը երկրորդն է, որ ուսումնասիրել է բահայիների դավանանքը:

3. Մեր կարծիքով, ինքնին կարևոր է հենց փաստը, որ նոր կրոնը իր քնօրբանում ուսումնասիրել է Աճառյանի նման մեծ գիտնականը, մանավանդ, որ դարասկզբին բահայինների մասին գիտական աշխարհում քիչ բան էր հայտնի: Եթե որպես բումարինների ադանդի առաջին հետազոտող Աճառյանը տպագրել է հայերեն և անգլերեն հոդվածներ, ապա բահայինների մասին իր հավաքած նյութը նա էրկափ տարիներ չի հրատարակել: Պատճառների մասին իր կենսագրական գրքում Աճառյանը չի նշում: Հայտնի չէ նաև, թե նա ծանոթ էր քարիզմին և բահայիզմին նվիրված Առաքյալի բավականին հանգամանալից հոդվածներին ու աշխատությանը: Իրենց անձնական ծանոթության և հարաբերությունների մասին ևս չի գրում, թեև իր հուշերում նշում է, որ Թավրիզում ապրած տարիներին Առաքյալը քաղաքի ճանաչված հնչակյան գործիչներից էր և ուներ տպաբան: Ի դեպ, Առաքյալը բահայիններին ուսումնասիրել է հենց Թավրիզում:

4. Բահայական կրոնին վերաբերող Աճառյանի ուսումնասիրությունը ամբողջովին ինքնուրույն է՝ հիմնված Բարձրում և Թեհրանում բահայիններից քաղած տեղեկությունների վրա և այդ առումով ունի նաև սկզբնաղբյուրի արժեք: Իսկ այն առանձին գիտական հոդվածով չհրատարակելու մասին առայժմ կարելի է միայն կռահել, որ ծանոթանալով Առաքյալի գրքին, Աճառյանը, որպես մեծ գիտնական, նույն բննայով իրեն կարող էր բույլ տալ համոզես գալ միայն այն դեպքում, եթե առավել խորն ու ընդգրկուն աշխատություն գրեր, իսկ դրա համար նա Թեհրանում ոչ այնքան ժամանակ ուներ, ոչ էլ այդ նյութի լայն հետազոտությունն էր նրա գիտական հիմնական հետաքրքրությունների շրջանակում: Այլ հարց է բահայինների ուսումնասիրության դրվագը որպես իր կենսագրության փաստերից մեկը ներկայացնելը, ինչը և արել է մեծ գիտնականը իր «Կյանքիս հուշերից» գրքում:

5. Անկախ վերը նշված ենթադրություններից, բահայագիտության համար շատ կարևոր է այն, որ Աճառյանը ևս ուսումնասիրել է այդ կրոնը, կարևոր փաստեր հաղորդել, արել ներասանգումներ ոչ միայն կրոնի էության, այլև մեծ տերությունների կողմից բահայիններին հովանավորելու հարցի քաղաքական կողմի վերաբերյալ, շարադրել իր վերաբերմունքը Արևելքում նոր, խաղաղասիրական կրոնի տարածման մասին:

6. Բահայականության ծագումից անցել է ավելի քան մեկուկես դար, աշխարհի քաղմաքիվ երկրներում այսօր արդեն սփռված են տարբեր ազգերի շուրջ 5 միլիոն բահայիններ: 1992թ. Հայաստանում ևս կազմավորվել է հայ բահայինների փոքր համայնք, որը 1999 թ. տվյալներով արդեն ունի 210 անդամ (Երևանում-52, Գյումրիում-14, Վանաձորում-12, Արտվյանում-8, Արմավիրում-15, Դիլիջանում-10, Ստեփանավանում-9, Մարդարասպատում-14, Ապարանում-12, Էջմիածնում-10 և այլն):

7. Եթե վերոշարադրյալին ավելացնենք, որ Հ. Աճառյանն է առաջինը հայերեն քարզմանել և դեռևս 1911թ. հրատարակել հնդկական «Բհագավադգիթան», ապա վստահաբար կարող ենք արձանագրել, որ նա ոչ միայն նշանավոր լեզվաբան ու հայագետ է, այլև լայն ընդգրկման արևելագետ, որի արևելագիտական ու կրոնագիտական ժառանգության ընդամենը մի բանի դրվագի կարողացումն անդիադառնալ մերկայացվող հիմնադրություն:

ՄՈՒՀԱՍԵԳ ԱԼԻԻ ԳԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՂԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

XVIII դ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրության սուլթանական իշխանությունը գնալով թուլանում էր: Ալեհիվացել էին սպակենտրոն ուժերը: Եվրոպական տերությունները, պայքարելով Արևելքի սարառման և հումքի հարուստ շուկաների համար, իրենց գործունեությանը նպաստում էին այդ գործընթացներին:

Լինելով օսմանյան նահանգ՝ 1798թ. Եգիպտոսը գրավեց ֆրանսիացիների կողմից: Վերջիններս չկարողացան հիմնավորվել այնտեղ, սակայն տեղում ատերություն և բնամանր սերմանելուց զատ, եգիպտացիներին ծանոթացրեցին քաղաքակրթության որոշ առաջադեմ բարենասնությունների: Մա զարկ ավեց երկրի հասարակական ինքնագիտակցության զարթոնքին:

Նաադոնեի հայտնի այդ արշավանքի արդյունքում Եգիպտոսում է հայտնվում Մուհամեդ Ալին: Օժտված լինելով փայլուն ուղեղով, պարզ մտածողությամբ, ունենալով ռազմական մեծ տաղանդ՝ Մուհամեդ Ալին արագորեն բարձրանում է թուրքական զինվորական կոչումների սանդղակով: Նորամանկներն օգտագործելով Եգիպտոսում ստեղծ քաղաքական ուժերի տարածայնությունները՝ Մուհամեդ Ալին շուտով անցնում է իշխանության գլուխ:

Հնտորեն պայքարելով սպակենտրոն ուժերի՝ մամլուքների դեմ, Մուհամեդ Ալին ամրացնում է կենտրոնական իշխանությունը: Նա իրականացնում է մի շարք կարևոր բարեփոխումներ, որոնք առելվում էին թե՛ ռազմական, և թե՛ գյուղատնտեսության ասպարեզներին: Մեծ նվաճում էր մենաշնորհատիրությունների հիմնադրումը, երբ երկրի գրեթե ամբողջ անտեսությունը դրվեց պետական վերահսկողության ներքո: Դրանով Մուհամեդ Ալին կատարեց առաջադեմ և շատ կարևոր քայլ՝ անհատ գյուղացուն կամ արհեստավորին դուրս շարժեց շուկայական հարաբերություններից: Ռազմական բնագավառի բարեփոխումները հնարավորություն տվեցին ստեղծել մոտ 250 հազարանոց մարտունակ բանակ, որը սպառնակեց լայնածավալ նվաճումները: Պատվիրակությունների փոխանակումը մշակույթի ասպարեզում պայմանավորեց ազգային բուրժուական մտավորականության առաջացումը: Այս ամենը նպաստեց ավատատիրական կարգերից նոր, կապիտալիստական հարաբերությունների անցմանը:

Եգիպտոսը, ոտք գցելով ժամանակի հետ, բավականին առաջ անցավ արևելյան այլ տերություններից: Բոլոր նախադրյալները ստեղծվեցին որպեսզի այն վերածվեր հզոր գերտերության և ավելի ակտիվորեն ազդեր համաշխարհային պատմության ընթացքին: Մուհամեդ Ալին ցանկանում էր իր ընտանիքի իշխանության ներքո վերածնել հզոր արաբական խալիֆայությունը: Աշխատանքներ տարվեցին արաբների մեջ արքնացնելու ազգային ինքնագիտակցությունն ու փառավոր անցյալի հիշողությունը:

Չարգասանման աննախադեպ քայլերը հնարավորություն տվեցին Եգիպտոսին բավականին ընդարձակել իր տարածքը, հիմնականում Օսմանյան կայսրության հաշվին, իսկ այնուհետև ընդհանրապես հարցականի տակ դնել Բարձր Դուռն հետագա գոյությունը:

Եգիպտոսի զարգացումն ու հզորացումը վտանգեցին աղաքածաշրջանում անգլիական շահերը: Արդյունքում Եգիպտոսը ունեցավ նույնքան պնասպատելի և ռոբալի անկում, ինչպես որ անապատելի և զարմամալի էր նրա բարձրացումը:

Մուհամեդ Ալիի կառավարման ժամանակաշրջանը Եգիպտոսի պատմության ամենափայլուն էջերից է: Եվ երբ այն տապալվեց, երկար ժամանակով խամեց Եգիպտոսի աստղը:

ՄՈՒՎԱՍՏԱԳԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՃԱՆԱԳԱՐՎՈՐԳՈՒԹՅԱՆ ԳԻՅԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ԸՈՒՐՁ (ԱՍՏԻՃԱՆԻ ՄԻՅԸ)

1. Արարագիտության մեջ ամենաբիշ ուսումնասիրված քննաներից մեկը Մուհամմադի գիշերային ճամփորդության մասին լեզենդի խորհրդանիշների դիցարանական բացատրությունն է:

Լեզենդում կան բազմաթիվ տարրեր, որոնք խորհրդանշական իմաստ ունեն, ինչպես ոսկյա քասը, Ալ-Բուրակը, կաթով, գինով, մեղրով անոթները և այլն, սակայն այս հաղորդման համար մենք ընտրել ենք դրանցից մեկի՝ աստիճանի միֆի վերլուծության խնդիրը:

2. Այս լեզենդը իսլամական ավանդության մեջ հայտնի է որպես *والمعراج* և *خالد السراج* գիշերային ճամփորդություն ու երկնային այցելություն և հիմնված է ավանդության (հաղիսներ, սիրա և այլն), ինչպես նաև Ղուրանի որոշ այբբերի վրա: Այն պատմում է Մուհամմադ մարգարեի՝ Ալ-Բուրակի օգնությամբ Երուսաղեմ կատարած ճամփորդության, այստեղ նախորդ մարգարեների հետ համատեղ աղոթքի, այնուհետև երկինք կատարած այցելության և Ալլահից ստացած ցուցումների մասին:

3. Իսլամական ավանդության մեջ կան լեզենդի բազմաթիվ տարբերակներ, որոնք զգալիորեն տարբերվում են իրարից, ընդ որում ոչ միայն առանձին մանրամասներով, այլ, երբեմն, նաև բուն էությանը, մասնավորապես, որոշ տարբերակներ հիշատակում են միայն գիշերային ճամփորդության մասին, մյուսները՝ միայն երկնային այցելության, սակայն, հիմնականում, այս երկու իրադարձությունները միավորվում են մեկ լեզենդի շրջանակներում:

4. Մեզ հետաքրքրող հատվածը վերաբերվում է Մուհամմադի՝ երկինք կատարած այցելությանը: Ավանդության մեջ երկինք բարձրանալու երկու միջոց է նշվում՝ երկինք տանող աստիճանը և Ալ-Բուրակը: Սակայն վերջինս բավականին հազվադեպ է հանդիպում:

5. Վերին և ներքին աշխարհները առասպելաբանական կարևորագույն հասկացություններից են: Միֆերում, որպես կանոն, տիեզերքը եռաշերտ է, ըստ որում, երկիրը գտնվում է այդ ուղղահայաց կառույցի կենտրոնում, ստորին աշխարհը մարմնավորում է դժոխքը, վերինը՝ դրախտը: Այս շերտերը, նույնպես, կարող են բաժանվել մակարդակների (Ղուրանում դրանք յոթն են): Կապը այդ բոլոր մակարդակների միջև իրականացվում է տարբեր միջոցներով՝ մինչև երկինք հասնող բույսեր, նետեր, աստիճաններ և այլն:

Աստիճանի քննան, որպես տիեզերական կապի միջոցի, հանդիպում է աշխարհի տարբեր մասերում: Հին Աշխարհում այն հայտնի էր երես-քրիստոնեական, եգիպտական, բուդդայական, իրանական, շամանական ավանդություններում, այն իր արտացոլումն է գտել նաև Ղուրանում (6.35, 52.38, 15.18):

6. Աստիճանը հաճախ օգտագործվում է որպես անդրակ, որի միջոցով նկարագրվում է տիեզերքի բազմաշերտ կառուցվածքը: Այն հենց այդպիսի ֆունկցիա է կատարում երկնային այցելության մասին լեզենդում՝ նրա օգնությամբ Մուհամմադը ոչ միայն երկինք է բարձրանում, այլ նաև այցելում է վերջինիս յոթ շերտերը:

7. Այս վերլուծության միջոցով փորձ է կատարվում ներկայացնելու Ղուրանի տեքստի դիցարանական բացատրության հնարավորությունը, ինչը բույլ կտա ավելի խորք ընկալել Ղուրանի տեքստը և վերականգնել այն մանրամասները, որոնք դուրս են մնացել ֆիքսված տեքստից:

«ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՐԱՆՍ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՐԲՈՐՈՐԸ ԵՎ ԳՐԱՐԱՆՎՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի ակտիվացումը Հայաստանին պարտադրում է նոր մոտեցումներ: Ղարաբաղյան հարցի միջազգայնացման պայմաններում մեզ համար ոչ բարենպաստ միտումներ է նկատվում իսլամական շրջանակներում:

Իսլամական կոնֆերանսը ՄԱԿ-ից հետո ամենաբազմամարդ, միջազգային ամենազդեցիկ իսլամական կազմակերպություններից է, որն անդրադարձել է դարաբաղյան հսկամարտությանը: Անդամ պետությունների քաղաքական, անտեսական և մշակութային ինտեգրացման քաղաքականությունը որդեգրված կազմակերպությունը (ԻԿԿ) գործում է 1969թ., որին ներկայումս անդամակցում են 55 իսլամական երկրներ, ներառյալ Ադրբեջանը: Կազմակերպությունն իր կարևորագույն խնդիրներից մեկը համարում է մասնակցությունը միջազգային այն կոնֆլիկտների լուծմանը, որոնցում ընդգրկված են մահմեդականները: Կազմակերպության գլխավոր մարմիններն են՝ բարձրագույն օրգանը՝ բազավորների, պետությունների և կառավարությունների ղեկավարների կոնֆերանսը, որ գումարվում է պարբերաբար, երեք տարի մեկ անգամ որևէ իսլամական երկրում, արտաքին գործերի նախարարների ամենամյա կոնֆերանսը, գլխավոր դատական մարմինը՝ իսլամական արդարության դիվանը: Կազմակերպության գործադիր մարմնի՝ Գլխավոր քարտուղարության նստավայր-գրասենյակը Ջեդդայում է (Սաուդյան Արաբիա): ԻԿԿ-ին կից գործում է Ջաբալցանի իսլամական Բանակը, որը ֆինանսավորում է ԻԿԿ ծրագրերը, խթանում անդամ պետությունների տնտեսական ինտեգրացումը:

Մահմեդական համերաշխության սկզբունքի վրա խարսխված կազմակերպությունը դարաբաղյան հարցի կապակցությամբ քանիցս հանդես է եկել հայտարարություններով, որոնցում դատապարտել է Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի «սզրեպիան», կոչ է արել Հայաստանին՝ դուրս բերելու գործերը «գրավյալ տարածքներից», մինևույն ժամանակ համճնախարելով համապատասխան ատյաններին՝ նյութական օգնություն ցույց տալու Ադրբեջանի գաղթականներին: Ղարաբաղյան հարցը դիտարկելով իբրև հայ-ադրբեջանական հսկամարտություն, ԻԿԿ-ն վերոհիշյալ խնդրին անդրադարձել է Կարաչիի XXI (1993թ. ապրիլ), Ջակարտայի XXV (1996թ. դեկտեմբեր), Թուրքիայի արտահերթ V (1992) արտաքին գործերի նախարարների կոնֆերանսներում, Կասաբլանկայի VII (1994թ. դեկտեմբեր), Թեհրանի VIII (1997թ. դեկտեմբեր) գագաթաժողովներում: Որոշ ծայրահեղ միտումներ են նկատվել Ջակարտայի կոնֆերանսում, ուր Հայաստանի կողմից Ադրբեջանի «գրավյալ տարածքներում» ազգաբնակչության դեմ գործողությունները որակվել են իբրև մարդկության դեմ ուղղված ոճիրներ, կոչ է արվել ԻԿԿ անդամ և միջազգային հանրության բոլոր երկրներին՝ օգուագործելու ազգու տնտեսական և քաղաքական միջոցներ՝ վերջ տալու «հայկական ագրեսիային»:

Ուժերի ներկա հարաբերակցությունը փոխելով հօգուտ իսլամական երկրների, փորձ է արվում ստեղծելու միջազգային հարաբերությունների մի նոր որակ, որն ամբազանցված է կրոնական սկզբունքներով:

ԻԿԿ շրջանակների հետ դիվանագիտական հարաբերությունների ընթացքում հայկական կողմը բազմիցս փորձել է պարզաբանումներ տալ Ղարաբաղյան հսկամարտության էության, խաղաղ լուծում գտնելու Հայաստանի ջանքերի մասին, անբույստրեյի է համարել խնդիրը կրոնական տեսանկյունից դիտարկելու միտումները:

Այս է վկայում նաև 1993թ. ապրիլի 22-ին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի ուղերձը ԻԿԿ Գլխավոր քարտուղար Համիդ ալ Գաբիդիին: Իր հեղինակ ԻԿԿ-ն հայադրբեջանական հակամարտության արդարացի լուծումը տեսնում է ԵԱՀԿ շրջանակներում տարվող խաղաղության գործընթացում:

Նշենք, որ Հայաստանը տարածաշրջանում ձգտում է խաղաղության, և ԻԿԿ-ի վարած ոչ քարենկաստ քաղաքականությունը Հայաստանի հանդեպ չի կարող խաչընդուռել ներկայումս ԻԿԿ անդամ որոշ պետությունների հետ ՀՀ ունեցած միջպետական հարաբերությունների զարգացմամբ: Հայ-խալամական հարաբերություններում անհրաժեշտ է խոսափել կրոնական հողի վրա որևէ խնդրի շահարկումից: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ջանքերը, ըստ ամենայնի, պետք է ուղղված լինեն խաղաքական շրջանակներում հայանպաստ տրամադրություններ ստեղծելու առաջնահերթ խնդրին: Տարածաշրջանի երկրների հետ երկխոսության և փոխըմբռնման միջոցով միայն Հայաստանը կարող է չեզոքացնել իր համար ոչ քարենկաստ միտումները:

ԻԿԿ-ի հետ Հայաստանի հետագա հարաբերություններում անհրաժեշտ է ապահովել ԻԿԿ-ի աշխատանքներին Հայաստանի ներկայացուցչությունը՝ դիտորդի կարգավիճակով:

ՕՏՆՆՅՆ ՄՈՒՐԳ

ՀՆՅԱՍՏԱՆԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՏԱԿԱՐԳՈՒՄ

Հին հունական, հռոմեական, հայկական և այլ աղբյուրներից հայտնի է, որ առաջավորասիական տարածաշրջանը և նրան հարող շրջանները ընդգրկող աշխարհում գոյություն է ունեցել որոշակի գահային աստիճանակարգ (գահակարգ): Հնագույն ժամանակներից այս աստիճանակարգի առաջին գահը հիմնականում պատկանել է Ասորեստանին: Մարական, Աբենեյան, հետագայում նաև պարսկական տիրապետությունների ժամանակաշրջանում կայուն տեղ են ունեցել միայն մարերը, պարսիկները և հայերը, հետագայում նաև պարսկները: Անկախ այս էրեւոսների քանակից՝ հիմնականում գոյություն են ունեցել երեք առաջնային գահեր: Մեկական գահ պատկանել է մարերին և հայերին, իսկ պարսկներն ու պարսիկները համատեղված տիրել են մեկ գահի:

Գահային աստիճանակարգը պայմանավորված է եղել տվյալ ազգի ու պետության հզորությամբ, նրա ունեցած զորքերի քանակով: Այս աստիճանակարգով է պայմանավորվել նաև հիշյալ պետությունների զորքերի էքնիկ դասավորությունը, ինչպես նաև «արքայից-արքա» տիտղոսի պատկանելությունը:

Քանի որ մարերը, պարսիկները և պարսկները հաջորդաբար հասել են գերիշխանության, ապա ենթադրելի է, որ նշված տարածաշրջանում երբևէ գերիշխանության է հասել նաև Հայաստանը, ինչն էլ ապահովել է նրա հաստատուն տեղը հզորների եռյակում կամ քառյակում: Ենթադրելի է, որ հայերը գերիշխանության են հասել մինչև մարերը, ինչը դրդում է այլ տեսանկյունով դիտարկել ուրարտական պետության բնույթը:

Գահակարգի հետ կապված պարզաբանումները և ճշգրտումները բավականին հառակ պատկերացում են տալիս հեռու Հայաստանի գրաված դիրքի ու ազդեցության մասին: Առկա տվյալներից հետևում է, որ Հայաստանը հանդիսացել է Հին Աշխարհի առաջնային և հզոր պետություններից մեկը, ինչն արտահայտվել է րե՛ նրա

տեղով հզորների զահակարզում, թե՛ նրա ունեցած զորքերի քանակով և թե՛ նրա տիրապետության ընդգրկած սահմաններով:

Հ
Ա

Հ Ա Պ Ա Վ Ո Ւ Մ Ն Ե Ր

- ԱԻ** - ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ
- ԳԻ** - ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտ
- ԳՊՄԻ** - Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ
- ԵՊՀ** - Երևանի պետական համալսարան
- ՀԱԻ** - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
- ԵՀԱՀ** - Երևանի «Հրայր Աճառյան» համալսարան
- ՀՄԻ** - Հայաստանի մանկավարժական ինստիտուտ
- ՀՅԹԻ** - Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ
- ՊԻ** - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ ՈՒԹ Յ ՈՒՆ

ԱՐԲԱՆԱՍՅԱՆ ՆՈՒՆԵ (ԵՊՀ) - 1920-ական թթ. եգիպտացի մտավորականի գաղափարական ճգնաժամը Նագիր Մահֆուզի «فصر الشرق» («Կարորի ամրոց») վեպում	1
ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒԼԻԱ (ԵՊՀ) - «Մրրի» հասկացությունը հայոց ավանդական մշակույթում և նահապետության առատելաբանությունը.....	2
ԱՐՇԱԿՅԱՆ ՄՆԵՐ - 1979թ. Իրանական հեղափոխության դրդադադարձառևերի շուրջ.....	3
ԲԱՆՅԱՆ ՎԱՐԳԱՆ (ԵՊՀ) - Մշակութային շուրջ որդես անարդյունավեպ մոդեռնիզացման հետևանք.....	4
ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԲ) - Թուրքիայի հանրադարձական-ժողովրդական կուսակցության ձևավորման հարցի շուրջ.....	5
ԲՈՐՈՒՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀԱԲ) - Հարավային Հայաստանի արձաքն անդրները (Ք.ա. II հազ. 1-ին կես).....	6
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ (ԵՊՀ) - 1978-1979 թթ. իրանական հեղափոխությունը որդես փարսաձաշրջանում նոր քաղաքական իրադրության ձևավորման գործուն.....	8
ԳՆՈՒՆԻ ԱՐՏԱԿ (ՀԱԲ) - Քաղաքային բնակավայրերը Կուր-արաքսյան ժամանակաշրջանում.....	10
ԳԱՂԱՅԱՆ ՏՈՐՔ (ԵՊՀ) - Յեղային և հասարակ անունների կառույցի մի քանի դրսևորումներ (հայկական լեռշխարի և Իրանական սարահարթ).....	11
ԳՐԲՈՅԱՆ ԱՍԱՆ (ԱԲ) - Հայաստան քրդական գրություն դերը գրական քրդերենի կազմավորման գործում.....	12
ԽԱԶԱՏՐՅԱՆ ԵԿԱՏԵՐԻՆԱ (ԵՊՀ) - Հոգևրանական ներագրման միջոցները սուֆիական գրականության մեջ (Տարիդադդին Աթթարի «Վարք սրբոց» սրեղծագործության օրինակով).....	13
ԿԱՐԱԳԵՏՅԱՆ ՆԱԻՐԱ (ԵՊՀ) - Քննադատական ռեայիզմը և հեղինակի ռճը Թատիին ալ-հաքիմի «Վապառական բնեչի օրագրում».....	14

ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ԱԻ) - Արուստ-Ռազակ իրն՝ Նազարֆկուրի Գումբուրիի «Մասսեր-ե Մուրթանիե» դպրանական աշխատությունը Արևելյան Հայաստանի XIX դարի քաղաքական իրադարձությունների մասին.....	14
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԳՐԱՆԻԿ (ԵՊՀ) - Հրեական համայնքը Եգիպտոսում XX դ. սկզբից մինչև 1960-ական թթ.....	16
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԳՊՄԻ) - Ռույ-Փլանքելչնի համաձայնագիրը որոշեա խրայելա-դադեպրիկյան հարաբերությունների զարգացման նոր փուլ.....	17
ՂԱՐԻՔՋԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՀ) - Հայազգի վեզիրները Ճարխյան խալիֆայությունում.....	18
ՂԱԵԶՅԱՆ ԳՆԵԼ (ՀՄԻ) - Ֆրանսիական մեծ հեղափոխությունը Ղուկաս Ինճիճյանի զննհարմամբ.....	20
ՄԱԼՈՅԱՆ ԱՐՄԱՆ (ՀՄԻ) - Գ.Ա.Օլիվիեի գեղեկությունները դրոյասիայերի մասին (XVIII դարի վերջին քառորդ).....	21
ՄԱՐՏՈՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ԵՀԱՀ) - Հաֆեզի առաջին դազալի առանձնահատկությունները.....	22
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀՅԹԻ) - Թուրքիա-Իրան հակասությունները և Հայաստանը արդի փուլում.....	23
ՄԵԼԻՔՅԱՆ ԿԱՐԻՆԵ (ՂԻ) - Հեքրադկեղոնական ժամանակաշրջանի (V դարի II կես - VI դար) դավանաբանական որոշ հարցերի շուրջ.....	23
ՄԵԼԻՔՈՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ (ԳԻ) - Յ.Վ. Գյոթեի «Ֆաուստի» հայերեն քարգմանությունների մի քանի խնդիրների շուրջ.....	24
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ) - Միլրաննիի արքայադոհմը՝ Հայկազուն նահապետների և արքաների ցանկում.....	25
ՇԱԳՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ՀԱԻ) - Հայկական հարսանիքի մի մոզական ծեսի ծիսա-առաստղեչաբանական եկթարեքարի վերականգնման փորձ.....	27
ՈՍԿԱՆՅԱՆ ՎԱՐԳԱՆ (ԱԻ) - Dewrêš e'rd (եզդիական «Նորի սուրբը»).....	28
ՂՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ (ԵՊՀ) - Վնչյունական փարբերակներից առաջուցած գեղանունները հայերենում.....	29

ՌԱՍԱԶՅԱՆ ՍԱՄՎԵԼ (ԵՊՀ) - Ձիտ կերտարը <i>«Քրտողի» էդուսում.....</i>	30
ՌԱՏԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ԵՊՀ) - Արարական փոխառու- բյուրները Տուրուբերանի, Եիրակի և Լոռվա հեքիաբներում.....	30
ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ, ՍԱՏԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԳԻ (ԵՊՀ) - <i>Ժամանակակից բուրբերենի դերբայների և նրանց դասավանդման մի քանի առանձնահատկությունների մասին.....</i>	31
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԻ) - Տրդատ I Արշակունու հեկ կառված դպրանագիտական մի քանի հարցերի շուրջ.....	32
ՍԱՏԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԳԻ, ՄԻՐԱԶՅԱՆ ՌՈՒՐԵՆ (ԵՊՀ) - <i>Աղոթքի և զիբրի փոխկադակցվածության մեկանարանությունը Իրն Արարիի «Տոտուս-ալ-Նիբան»-ում.....</i>	34
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՀԱՐ (ԵՀԱՀ) - Նր. Աճառյանը՝ Պարսկաստանի կրոնական նոր ուղղությունների ուսումնասիրող.....	35
ՎԻՐԱՐՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊՀ) - Մուհամեդ Ալիի դերը Եգիպտոսի դպրություն մեջ.....	37
ՏՈՆԻԿՅԱՆ ՍՈՆԱ (ԵՊՀ) - Մուհամմադի գիշերային ձանադարհորդության դիցարանական վերլուծության հարցի շուրջ (սարիձանի միջոց).....	38
ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՔՍ (ԱԻ) - «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության վերաբերյալ.....	39
ՕՇԱՆՅԱՆ ՄՈՒՐԱԳ - Նախաստանը հին աշխարհի գանակարգում.....	40
ՀԱՂԱՎՈՒՄՆԵՐ.....	41

Պատվեր 67:

Տպարանակ 100:

Տպագրված է «Դավիթ» ֆիրմայի տպարանում:
Երևան, Տերյան 72:

